ՏԱՐԱԶ

Գեղագիտական, Գրական, Հասարակական, Քննադատ. Քաղաքագիտական

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍ

Քառասեօրեայ տարի ՓԵՏՐՎԱՐ № 2—1916—XXVII

Հասցէն՝ Тифлис, Редакція «ТАРАЗ». Tiflis (Caucase), Direction «TARAZ»

Խմբագրութիւնը յօդուածները կրճատում է, ենթարկում փոփոխութեան և չբատկելիքը (եթէ թերից պակաս) չի վերադարձնում։

անձնական ընդունակցութիւն խմբագրի հետ
ԵՐԵՔՇԱԲԹԻ և ՈՒՐԲԱԹ առ. ժ. 11—12։

Բայտարարութիւն *ընդունւում է ամեն լեզուով* **Տարազի** *յայտարարական տողը առաջին երեսը 40 կոպ., վերջին 25 կոպ մանրատառ (պլոտիա)։ Արտասահմանից կրկնակի։ Շատ անգամ կրկնողներն առանձին համաձայնութեամբ։*

Աղբիւր-Տարազ *ամսական 33 կ.*
Տարազի ներկայ №-ը 2 կ.

Խմբագրութիւն—Թիֆլիս, Գօլօվինսկի պրօսպեկտ, տ. № 41, բաց է ամեն օր (բացի ասն և կիրակի օրերից) առ. 10 և կէս ժ. մինչև 2-ը կէսօրից յետոյ։

Գолов. пр., 41 *Տելեֆօն 16—90*

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՈՒՄԷ 1916 ԹՒԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ՅԱՒԵՐԺ ՅԻՇԱՏԱԿ ԳԷՈՐԳ ՉՄՇԿԵԱՆԻ

Հայոց Թեմական Ընկերութիւնը *1881* թ.

Ձախից 2-րդ կանգնածը ԳԷՈՐԳ ՉՄՇԿԵԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ն Կ Ա Ր Ն Ե Ր

Կարմէն Սիլվա
Կոմս Իլ. Իվ. Վօրօնցով-Դաշկով
Բարգէն Վարդապետ — Տ. Ն.
Նորայր Բիւզանդացին — Ա. Մ. Նզհդեան
Յովսէփ Աթաբէկեան
Կարապետ Կուսիկեան
Իմ թատրոնական յիշողութիւններից — Գէորգ Չմշկեան
Գէորգ Չմշկեան քարտուղար Կ. Հ. Բ. Ը. — Բժշկ. Բ. Նաւասարդեան
Թերթեր իմ յիշողութիւններից — Յ. Տէր Գրիգորեան (Վանցս)

Յաջորդութիւն

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՆԸ

Յանուցանում է, որ առաջիկայ 1916—1920. թ. թ. քառամեակի համար իրաւասուների ընտրութիւնները նշանակւած են.

I. Մարտի 20-ին, առաջին ընտրողական շրջանի համար՝ Աշխատանքի Քաղաքային Բորսայի շէնքում (Վերայի վայրէջք)։

Երկրորդ ընտրողական շրջանի համար՝ Քաղաքային Դուման նիստերի սրահում (Երևանեան հրապարակ, մուտքը Վելիամինովսկի փող. կողմից)։

Երրորդ ընտրողական շրջանի համար՝ Քաղաքային Արհեստաւորաց դպրոցի շէնքում (Էկզարխեան հրապարակ)։

II. Մարտի 20-ին, չորրորդ ընտրողական շրջանի համար՝ նախկին Արաքսեանի թատրոնում (Հաւլաբար)։

Հինգերորդ ընտրողական շրջանի համար՝ Թիֆլիսի Առևտրական դպրոցի շէնքում (Նիկոլայեսկի հրապարակ)։

Վեցերորդ ընտրողական շրջանի համար՝ Զուբալովի անուան Քաղաքային Ժողովրդական տանը (Կիրոչնի փող).

Եօթերորդ ընտրողական շրջանի համար՝ Քաղաքային դպրոցի շէնքում (Զավոկզալնի փող. Բոտանէի տունը)։

ԱՌԱՆՁԻՆ ՏՈՄՍԵՐ ընտրութեան սրահները մանելու համար ընտրողները կարող են ստանալ Քաղաքային Ուպրաւայի 1 բաժանմունքի դիւանատունը (Սերգիևսկի փող. № 4)։ Իրաւասուների ընտրութեան ժամանակաւոր բաժանմունքի շէնքում ամեն օր, նոյն իսկ տօն և կիրակի օրերը, առ. ժ. 10-ից մինչև 2-ը ցերեկւայ։

Տոմսերի համար ընտրողները պէտք է անձամբ ներկայանան։ Ընտրութեան օրերին տոմսեր կը տրւին առ. ժ. 9-ից սկսած ընտրութեան վայրերի մուտքի մօտ։

Այն անձինք, որոնք ընտրողական իրաւունքից պիտի օգտւեն ուրիշներից լիազօրւած լինելու կամ հաւատարմատարութեան, ինչպէս նաև խնամատար կամ ներկայացուցիչ լինելու պատճառով, պող բարեհաճեն ներկայացնել համապատասխան փաստաթղթեր, որպէսզի հնարաւորութիւն լինի այդպիսի ներկայացուցիչների ցուցակը նախօրօք պատրաստել։ 1—1

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է 1916 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

34-ՐԴ ՏԱՐԻ ԵՒ 27-ՐԴ ՏԱՐԻ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԲԱԶՄԱԲՈՎԱՆԴԱԿ

ՀՈՒՆ ՀԱՆԴԷՍՆԵՐՈՒ



Հարկ կա՞յ աւելցնելու, որ „Աղբիւր“ը հայ մանուկի բարեկամը, մի քանի սերունդ է „Տարազ“ը հայ ՄԻԱԿ իլլուստրասիօնն է, որ արտացոլում է հայ կեանքը և Միջազգային Մամուլից ճանաչուած է իբրև հոչակաւոր հրատարակութիւն, իսկ համառուսական տպագրական ցուցահանդէսում, դեռ սրանից քանի տարի առաջ, պարգևատրուած։

„ԱՂԲԻՒՐ“ և „ՏԱՐԱԶ“Ը իրենց անկախ ազատ, անկուսակցական ուղղութեամբ պատկանում են համայն հայութեան։

«ԱՂԲԻՒՐ»ի տարեկան բաժանորդագինը 3 ռ., «ԱՂԲԻՒՐ»-ՏԱՐԱԶ»ը միասին 10 ռ., (արտասահման 50 ֆր., կամ 40 շիլինգ)։

Հասցէն՝ Тифлис, Редакція «АГБЮР»-«ТАРАЗ». Tiflis. Direction «AGBUR»-«TARAZ».

Խմբ.-հրատ. ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ

ԱՊԱՒՈՒԿ ԵՒ ՄԱՍ-ՄԱՍ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԻ ԸՆԴՈՒՆԻՒՄ

«ԱՂԲԻՒՐ»-ՏԱՐԱԶ»ի տարեկան 10 ռ. վճարող բաժանորդները հաճարուում են հիւրեր Գրական-Գեղագիտական Սալոնին և կարող են յաճախել բոլոր jour fixe-ներին ու օգտուելընթերցարանից։

1-ԻՆ ՏԱՐԻ „ՎԱՆ-ՏՈՍՊ“ 1-ԻՆ ՏԱՐԻ

Հասարակական, քաղաքական, գրական շաբաթաթերթ

ԲԱԺԱՆԵԳԻՆՆ Է ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Տարեկան 4 ր.	կէս տարեան 2 ր.—50 կ.	Ամսական 40 կ.	Հատը 10 կ.

Արտասահմանում՝ տարեկան 15 ֆր. վեցամսեան՝ 8 ֆր.։

«ՎԱՆ ՏՈՍՊ»-ին վերաբերեալ նամակները, հեռագիրները և դրամը պէտք է ուղարկել միմիայն խմբագրութեան հասցէով։ «ՎԱՆ ՏՈՍՊ» շաբաթաթերթը ունի իւր յատուկ խմբագրական կազմը և որևէ առնչութիւն չունի «ԱՂԲԻՒՐ»-ի և «ՏԱՐԱԶ»-ի խմբագրութեան հետ։

«ՎԱՆ ՏՈՍՊ»-ի հասցէն՝ Тифлис, Головинскій пр. № 41, арм. журнала „ВАН-ТОСП“ արտասահմանից՝ Redaction du journal Armenien «VAN-TOSP» Russie. Tiflis Golovinski pr. № 41.

ՀՐԱՏԱՊ ՍՓՓՓԱՆՔ ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆՑԻՆԵՐԻՆ

Նոր-Տարայ պարզևաբաշխութիւնները, հանդէսները Հրատապ Սփոփանքի ապաստարանում շարունակեցին և Ծննդեան տօներին։ Թաթախման համար հրաւիրած էր Երիմեան Հայրիկի եղբօր հարս (փախստական) տ. Երիմեանը, որպէսզի նրա ցուցմունքով պատրաստուի նաւակատիկի սեղանը հէնց այնպէս, ինչպէս կատարում է Վանում։ Պատրաստած կերակուրները շատ գոհացրին սեղանակիցներին։ կարդացուեցին Թաթախումից յետոյ ճառեր և երգեցին «Այսօր տօն է»։ Այդ ժամանակ կարդացուեց և Վեհափառ Կաթողիկոսի դիւանապետ տ. Տիրայր վարդապետի նոյն երեկոյեան ս. Էջմիածնից ստացած հեռաւոր հեռագիրը Տիգրան Նազարեանի անունով։

Նորին Օծութեան հաճելի եղաւ հրամայել "Եղբայրական Օգնութեան, միջոցներից ուղարկել ձեզ 1000 ռուբլի ձեր ապաստարանի համար։ Եւ թող լինի հայրապետական օրհնութիւնը ձեզ վրայ եւ դառն ճակատագրից հալածուած էոյերի, եղբայրների անօգնական մանուկների վրայ»։

Հեռագրի ընթերցում լուսց յոտընկայս և երգուեց «Մայր» երգը։

Ջրօրհնէքին ճաշից յետոյ երեկ, ժամը 5-ին ահագին բազմութիւն փախստականների հիւրերի լցրել էին մեծ սրահը ձմեռային ապաստարանի։ Տօնածառը որ զարդարուած էր շատ շքեղ զանազան պատշաճ նուէրներով և գոյնզգոյն էլէքտրիկ մոմերով, առաջացնում էր գեղեցիկ էլէֆա։ Երգեցին և ճառեր ասացին իրանք փախստականները։ Բաժանուեցին շատ առատ կանֆետ, մրգեղէն և Թիֆլիսում յայտնի Սահակեանցի շաքարահացի վաճառանոցից ուղարկուած մի քանի հարիւր շատ համեղ և մեծ խնամքով պատրաստուած կաթնահունց։ Հիւրերին էլ տուեց այդ կաթնահունցից և քաղցրեղէնից։ Ապա սկսեց պարզևաբաշխութիւնը տօնածառի իրերից։

Հանդէս էին դրուած, Հրատապ Սփոփանքի արհեստանոցում գործուած և ասեղնագործուած շատ նուրբ ձեռնագործներ։ Հանդէսը փառահեղ էր և վերջացաւ ժամը 8-ին։ Դրանցից յետոյ Տ. Նազարեան կաթողիկոսին ուղարկել է հետևեալ հեռագիրը.

Անսահման ուրախութեանս զգացումները արկականելով առաջս Ձերդ Օծութեան հիանդուլթիւնից ապաքինուած լինելուտիւթով եւ շնորհաւորելով արբազան տօները, «Հրատապ սփոփանքը Մայր Հայաստանցիներին» եւ ես արտայայտում ենք մեր խորին երախտագիտական զգացումները այն զեղուստ խոնամքի համար, որ բարձր Հովանաւորդ տածում է դէպի մեզ, ջերմագին աղօթելով Ամենաարարչին պարգեւել Ձերդ Օծութեան կատարեալ առողջութիւն եւ արեւշատութիւն։

Որդիական անսահման սիրով Վեհափառութեանդ անձնուէրը»՝ Տ. Նազարեան

Հրատապ Սփոփանքում կատարուեց ս. Ղևոնդեանց տօնը և ճաշկերոյթ յայտարարուեց «Եղբ. Օգն.» անձնուէր անդամ, փախստականներին խնամող և նրանց իր բծաւոր տիֆով վարակուած ս. Էջմիածնում նորերս վախճանած Տէր-Բաբգէն վ.-ի յիշատակին և նրա ընկերակից այլ հայ հոգևորականների, որոնք մահացան ներկայ պատերազմի նոյն պայմաններում։

Վարդանանց տօնը կատարուեց շատ վայելուչ։ Առաւօտեան պատարագի գլուխը Քողոքի երեխաներին բաժանուեց տաք հագուստ բոլորովին նոր, ապա նախաճաշից յետոյ Ճուղուրեան քահանան՝ կատարեց եկեղեցական հանդէս. հոգեհանգիստ Վարդանանց 1036 նահատակների այսօրուայ պատերազմին յաղթական մահով պսակուած մարտիկների յիշատակին։ Ճուղուրեան քահանան պատշաճ խօսք ասաց Վարդանանց օրը համեմատելով այսօրուայ պատերազմի հետ ազգը լաւ տպաւորութիւն թողեց փախստականների վրայ։ Տեսարանը սրտառուչ էր։ Փախստականն կանայք բազմատարած լալիս էին իրանց օրը, աղօթքներու հառաչանքներով։ Փախստական վարժուհիների երգեցիկ խումբը երգում էր «Տարօն և Վասպուրական»։ Երեկոյեան, ճաշից յետոյ կատարուեց հանդէս։ Ճառեր խօսեցին փախստական ուսուցիչները, վասպուրական ուսումնարանի աշակերտները և երգեցին ազգային շատ երգեր։ Հանդէսը վերջացաւ «Մեր հայրենիքով» և «Հայր մերով»։ Ճաշից առաջ երեխաները ընդարձակ այգում զարմացան մանկական «ձիու շաւով»։

Բարեկենդանի գիշերը Ապարանում գաղթականները մի ուրախութիւն սարքեցին։ Տղայական պարեր, երգեր, սրախոսութիւններ և այլն շարունակեցին մինչև կէս գիշեր։ Աղջիկներն ու կանայք և երեխաները շատ շատ պարկեցին։ Ուրախութիւններից յետոյ նրանց լաւ ուտեցրեցին առատութեամբ իւղով մեղրով պատրաստուած հալւան խորոված ձուկ։

ԽՄԲԱԳԻՐ-ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

Տիգրան Նազարեան

ՏԻՄԱ

RÉDACTEUR EN CHEF ET DIRECTEUR

Tigran Nazarian

ԹԻՓԼԻՍ № 2 ՓԵՏՐԻՒԱՐ XXVII—1916 Tiflis

Կարմէն Սիլա

Նորին Վեհափառութիւն Եղիսաբէթ Մայր-Թագուհի Ռումինիայի

Ծն. 1843 թ. † 1916.

ԿԱՐՄԷՆ ՍԻԼԱ

Փետրուարի 18-ին առ. 8 ժ. 25 ր. Թոքերի բորբոքումից, շրջապատուած արքայական իր գերդաստանի անդամներով, 83 տարեկան հասակում վախճանուեց Բուխարեստում, Ռումինիայի Մայր-Թագուհի Եղիսաբէթը և կիրակի, փետ. 21-ին մարմինն ամփոփուեց Կուրդէադարջէս տաճարում։ Ի նշան սգի պարլամենտը դադարեցրեց իր նիստերը և դպրոցներն ու հասարակական հիմնարկութիւնները փակուեցին։

Հանգուցեալ Եղիսաբէթ Թագուհին հռչակաւոր մատենագիր կարմէն Սիլան է։ Աղբիւրի և Տարազի մշտական ընթերցողները տարիներից ի վեր գաղափար ունին այդ նշանաւոր գրական դէմքի մասին։ Անսահման գութ ու սփոփանք, կարեկցութիւն, տոկուն աշխատանք, հայրենասիրութիւն, շիտակութիւն, ահա այն կանուան, որի վրայ վեհափառ մատենագրուհին հիւսում էր իր սքանչելի գրուածքները՝ մի-մի գոհարներ պատանեկութեան, ժողովրդական ընթերցանութեան համար, թարգմանուած եւրոպական բոլոր լեզուներով։ Սիրահար արուեստի և գրականութեան ու նրանց իր հարս գնացած երկրում՝ Ռումինիայում ժողովրդականացնելուն մեծ պաշտպան։ Հոգ ու քընքոյշ քնաւորութեամբ, մատչելի իր ժողովրդի բոլոր խաւերին և լիուլի նրանց կարեկից։ Մեր մեծ իշխանուհի Ելենա Պաւլովնայի քրոջ աղջիկն է և սրան տարիներ առաջ Պետրոգրադում հիւր լինելու առիթից օգտուելով, Ռուբինշտեյտից դաշնամուրի դասեր է վերցրել։

Աղբիւրի № №-ից մէկը և Դրական-Գեղագիտական Սալօնի մի հերթական երեկոյթ կը յատկացնեին տաղանդաւոր մատենագրի և գթառատ կնոջ յիշատակին։

Բարոյական պարտք համարեցինք որդուն՝ ռումինական թագաւորին և ռումինական մամուլի Մօրթեան, որի անդամներից շատերի հետ յաճախ ընկերական շփումն ենք ունեցել մամուլի կօնգրէսներում, ուղարկել հեռագրով ցաւակցութիւն։ Եւ պատասխան ստացել ենք հետևեալ հեռագիրը՝

Բուխարեստ, Արմունիից Տիգրան Նազարեանին, Թիֆլիս. Նորին Մեծութիւն Թագաւորը յանձնեց ինձ հաղորդել ձեզ արհայական իր յատագոյն շնորհակալութիւնները։

Հենրի Կատարջի, մարէշալ արքունի տան։

Ահա և մեր ուղարկած հեռագրները՝

I

Նորին Մեծութիւն Ռումինիայի Թագաւոր Ֆերդինանդին, Բուխարեստ,

Ակնածութեամբ և խորին ցաւի զգացումով խոնարհւում եմ Ձեր ծնողների առաջ Վեհափառ Թագուհի-մօր՝ Կարմէն-Սիլայի, որի շնորհալից գրուածքները

Կոմս Իլ. Իվ. Վoroնցով-Դաշկով

Ծն, 27 մայիսի 1838 թ. † 15 յունուարի 1916 թ։ Ալուպկա

† Տ. Բաբգէն վարդապետ
4 յունուարի 1916 թ. Ս. Էջմիածին

երկար տարիներ ճոխացրել են իմ հայ Աղբիւր և Տարազ հանդէսները։

Յոտս Ձերդ Վեհափառութեան մատուցանում եմ իմ խոնարհ վշտակցութիւնը։

Տիգրան Նազարեան

II

Բումինական Մամուլի Միութեան. Բուխարեստ

Իմ վշտագին մասնակցութիւնն եմ յայտնում դառն կորստեան համար, որ կրում են բումինական գրականութիւնն ու մամուլը յանձին Վեհափառ Թագուհի Կարմէն Սիլուայի, որ շատ տարիների ընթացքում պճնազարդարել է Աղբիւր և Տարազ հանդէսների էջերը։

Տ. Նազարեան, անդամ Շաղկապի Միջազգային Մամուլի Դաշնակցութիւնների։

ԿՈՄՍ ԻԼ. ԻՎ. ՎՈՐՈՆՑՈՎ ԴԱՇԿՈՎ

Յունուարի 15-ին Ալուպկա քաղաքում, Սև Ծովի ափին, իր կալւածքում, 78 տարեկան հասակում վախճանուեց Կովկասի նախկին փոխարքայ, պետական նշանաւոր գործիչ, 1881—1897 պալատական մինիստր, Ալէքսանդր III կայսեր օրով, գեներալ-ադիւտանտ Կոմս Իլարիոն Իվանովիչ Վորոնցով-Դաշկով։ Հանգուցեալի կենսագրութեան և քարակտերիստիկի, իբրև պետական գործիչի, ծանօթ են մեր ընթերցողները. խաղաղասէր, բայց նշանակալից, որ Կովկաս իր մուտք գործած օրերին իբրև փոխարքայ՝ ականատես հայ-թուրքական անմիտ արիւնհեղութեան բացում, Շուշում, Երևանում, Նախիջևանում և Կովկասից մեկնելիս էլ այն մեծ աղէտը՝ Վանի նահանջը, տասնեակ հազարաւոր հայ փախստականների բնաջինջ լինելը քաղցից, տիֆից, խօլերից ս. Էջմիածնում, Երևանում։

Շնորհիւ իր խաղաղասիրութեան, հաշտութեան ձիթենին բերաւ հայ-ոսմական տարրի մէջ. շատ բեւեռ օր-օրի վրայ ընդգծեց իր հայասիրութիւնը, սակայն ոչ շօշափելի հետևանքներով։ Եւ ընդհակառակ թէ ոսմական մի որոշ խաւի մէջ և թէ մեր հարևան վրացի ու թիւրքերի նախանձը գոգուեց, թէև շատ անարդարութիւն է վերջիններիս բոլոր պատճառաբանութիւններն ու մատի փաթաթանները։

ԲԱԲԳԷՆ ՎԱՐԴԱՊԵՏ

Ս. Էջմիածին 4 յունուարի

(Սեպհական հեռագիր)

Վշտաբեկ գուժում եմ Բաբգէն վարդապետի մահը, որ տեղի ունեցաւ բծաւոր տիֆից այսօր 3 ժամին։ Տիրայր վարդապետ, դիւանապետ Կաթողիկոսի։

— —

Ծննդեան տօնի պատրաստութիւնների էինք տեսնում Հրատապ Սփոփանքում։ Ուհարարուհիներն ու սպասուհիները թաթախման սեղանի հոգսն էին քաշում, օրիորդները տօնածառն էին զարդարում, իսկ երեխաներն էլ հրճւում էին այդ տօնածառի շուրջ։ Սրանց մէջն է այսօր մի նոր բեկորիկ, հազիւ 7 տարեկան մի մանուկ, թախիծում խորասուզւած։

— Տղաս ինչու դու էլ չես խաղում, հարցնում ենք։ Նա լուռ է, ինչպէս արձան։ Ո՞վ է այս նորեկը հարցնում ենք։

— Իրոլ ամուսինը բերաւ թողեց այստեղ, ինքը գնաց, ոլը է, պատասխանեցին շրջապատողները։ Ոլը խօսքը շանթահար արաւ մանկանը, փոթորկւած կուրծքը, կարծէք մի հրաբուխից, պայթեց, արտասուքը հեղեղի նման սկսեցին թափւել, սրտի կսկիծն ու մորմոքը, հեծկլտանքը ամենքիս մասնակից արաւ ծնողազուրկ մանկանը։ Դոյնզդոյն կանֆէտներ, տօնածառի պաճուճանք և ոչ մէկը չը կարողացան սիրաշահել նորիկ որբուկիս։ Հեռացաւ նա այգու մի անկիւն և ընկերակիցներին ու կանանց պատւիրեցինք չը խախտել նրա խաղաղութիւնը։ Ահա հէնց այդ օրը, թաթախումից առաջ ստացանք ս. Էջմիածնայ միաբանութեան եռանդուն անդամ, սինօդի անդամ, *Արարատ* ամսագրի խմբագիր, Նղբ. Օգնութեան գլխաւոր կարգադրիչ Ցանձնաժողովի անդամ, մեր աշխատակից Բաբգէն վարդապետի մահուան բօթաբեր հեռագիրը։

Բաբգէն վարդապետը արիական, 42 տարեկան հասակում ընկաւ փառաւոր մահով, քրիստոնէական իր անձնւէր պարտքը կատարելիս։ Փառք նրա յիշատակին, պատիւ ս. Էջմիածնայ միաբանութեան, յարգանք Մայր Աթոռին, խոնարհ վշտակցութիւն Լուսաւորչի գահաժառանգ Վեհափառ Հայրապետին։

Բաբգէն վարդապետը շուշեցի է. աւարտելով Ղարաբաղի Թեմ. դպրանոցը և Գէորգեան Ճեմարանը, Յարկովի համալսարանի իրաւաբանական բաժնում եղել է իբրև ունկնդիր։ Բնաւորութեամբ հեզ, մաքրասէր, կուլտուրական-հասարակ. գործիչ, ուսումնասէր և կողմնակից առաջադիմութեան, Էջմիածնին անձնւէր, հայրենասէր։ Բաբգէն վարդապետի խուցը ս. Էջմիածնում ամենաաշենաղարդւածն էր, եւրոպական մտքով։

Ընտիր մատենադարան, գեղեցիկ նըկարներ, կահկարասիք, սերուիզ։ Օտար այցելուներն այստեղ հիւրասիրուում էին և շատ գոհ հեռանում ս. Էջմիածնից։ Բարգէն վարդապետի օրով Արարատը ճոխացաւ, ուր ինքն էլ զեղուում էր շատ ինքնուրոյն և թարգմանական, քննագիտական յօդուածներ։ Արարատի մէջ նրա վերջին յօդուածը՝ Մանուէլ Վ. Կիւմիշխանցու պատմութիւնն է, կիսատ մնացած։ Ունի առանձին գլուխներով լոյս տեսած շատ աշխատութիւններ, որոնց թուում Առաքել Վ. Դաւրէժեցու պատմութիւնը։

† Տ. Բարգէն վարդապետ

Իզմիրլեանին կ. Պոլսից բերող շոգեմարի մէջն էր և թէ սրա և թէ Վեհափառ Գէորգ V կաթողիկոսի սիրելին և լիուլի սրանց վստահութիւնը վայելող՝ Ղարաբաղի թեմ. դպր. 75 ամեայ յոբելեանի ամենահանդուն գործիչը։ Վերջերս կաթողիկոսից առաջարկուած էր կայսեր, Ղարաբաղի թեմ. առաջնորդութեան։ Բարգէն վարդապետը իբրև սիրող-լուսանկարիչ մի շարք ֆոտոգրաֆիաներ է տուել Տարազին և մեր աշխատակիցն էր։ Ղեւոնդեանց տօնին Հրատապ Սփոփանքը հոգեհացը յայտարարեց Բարգէն վ.-ի յիշատակին և Գրական-Գեղագիտական Սալօնը իր աշխատակիցների յիշատակին տարեկան երեկոյթում կը յիշատակէ և Բարգէն վարդապետին։

ՆՈՐԱՅՐ ԲԻՒՋԱՆԴԱՑԻՆ

Անունը մեծ, ինքն էլ էր մեծ, մեծ ու մեծ։

Չկայ այլ ևս այդ մեծութիւնը։ Այժմ նորա ուրուականն է այցելում մեր օրաթերթերին ու շընջում՝ անցայ ես, այժմ էք ինձ ողջագուրում. անցայ ես, այժմ էք ինձ տեսնել ձգտում. անցայ ես, այժմ էք ինձ մեծացնում։

Հարկաւ այդ այդպէս է, վաղնջական մեր սովո-

† Տ. Բարգէն վարդապետը ի Տէր հանգուցեալ Տ. Տ. Մաթէոս Կաթողիկոս Իզմիրլեանի ճախմբի հետ Պետրոգրադում

Ձախից առաջի կանգնածը հանգուցեալ Տ. Բարգէն վարդապետը

† Բիւզանդ Նարայր

րութեամբ՝ որը մահից յետոյ է սէրը մեր շիրմին այցելու ուղարկում, կամ, աւելի ճիշտը, մինչև շիրիմ յուղարկաւոր հանդիսացնում։

Գուցէ նրանից է այդ՝ որ մեր կենդանութեան օրով արժանի գնահատութիւնը կարող է մեզ երես առնել տալ, ամբարտաւանացնել և թերևս, բնական հետեւանքով շնորհազուրկ դարձնել, որպէս այդ երևում է սորա ու նորա վրայ։

Զիարդևէ, նոր այր Բիւզանդացին անցաւ, յետոյ մենք ելանք նորա ուրուականը գգուելու, ափսոս մեծին՝ ասելու, բազմաշխատին մեր երախտաճանաչութեան խունկը ծխելու։

Մենաւորական խցի Թշուառաքիրտն վաստակաւորն էր Բիւզանդացին, և այդ խցի ցածուն յարկի տակ էր նա դարբնում ու դարբնում իւր տաժանալից երկերը։

Դարերը դարերի վրայ՝ ժամանակը խաթարում է գրաւոր երկերը, աղաւաղում է բառն ու իմաստը։ Հետախուզել և նախնական կերպն ու գոյնը, ձայնն ու իմաստը վերադարձնել բառին ու դարձուածին, ահա այդ էր վաստակը՝ որ Թշուառաքիրտն է կոչում ինքը Բիւզանդացին։

Անցաւ վերջապէս այն մարդը, որ յատուկ սիրով իւր համար բան ու գործ էր սրել՝ ուրիք ուրիք վարատել մութը մեր հինաւուրց մատենագիրների ինչ ինչ ընթերցուածների վրայից, ուղղել, ճշդել այն ամենը և լոյս անել ժամանակի և ընդօրինակող գրիչների չնորհիւ խրթնացած, մթագնած, աւաղաղուած բառերի վրայ։

Արդարև Թշուառաքիրտն աշխատանք, որի գնահատութիւնը խիստ սակաւաւորները միայն անում են. իսկ մեծամասն զանգուածի համար այդպիսի աշխատանքի եղածը չեղածը միևնոյնն է։ Ուստի Նորայրների—մենաւոր խուցերի աղօտ լոյսի ու խուլ լռութեան մէջ տքնութեան նուիրուածների—կեանքը մեծամարմին զանգուածի համար աննշմար է անցնում, ատուների մէջ շողարձակ լինում և ատուների մէջ մարում։

Ունենայինք մենք մեր անմահների համար տաճար, մեր պանթէօնը, մեր մուզէումը, մենք այնտեղ կ'արձանացնէինք մեր յաւերժականներին, և այնտեղ հետաքրքրիր և ուսումնատենչ այցելուն կ'ուսանէր նոցա արած գործերը և իւր սրտի տախտակի վրայ կը դրոշմէր անեղծ նոցա անունը։

Մինչ ց'այն, ով Բիւզանդացիներ, ձեր անունը մատենադարանների հատորների մէջ կը մնայ դրոշմուած, շատ քչի համար դունուրեք բացուող, մեծ բազմի համար կնքուած շիրիմ։

Ա. Մ. Նզհկեան

ՅՈՎՍԷՓ ԱԹԱԲԷԿԵԱՆ

Ղարաբաղի հին տոհմի շառաւիղ, սկզբնական կրթութիւնը ստացել է Իշխանուհի Սօֆիա Արղութեան-Երկայնաբազկի պանսիօնում, աւարտելով Թիֆ. Լ-արական գիմնազիան, անցնում է արտասահման։ Հոհենհայմի ճեմարանում ուսումնասիրում է գիւղատնտեսութիւն, ապա Շտուդգարդում հակւում է սոցիալիստական վարդապետութեան։ Վերադառնալով հայրենիք, Երևանի մօտ հայրական Ներսէսապատ կալւածքում սկսում է գիւղատնտեսական գործունէութիւն, բարի ուղեցոյց լինելով հարևաններին։ Գիւղացիներին ուսուցանում է գիւղատնտեսութիւն և հզօր օրինակ լինում նրանց հողի մշակման, ջրաբաշխութեան ևն։ Կարսում, ուր պարտաւոր էր ծառայել իբրև պահեստի զինուոր, Ռուս-Ճապոն. պատերազմին, սիրւում է նահանգի ազգաբնակչութիւնից և ընտրւում II Պետական Դումայի անդամ։ Ամբողջ կեանքը մի պայքար, եռանդուն գործունէութիւն էր և յոգնած միտքը, թուլացած ջղերը պատճառ եղան շատ վաղաժամ կնքելու իր մահկանացուն, հէնց իր ձեռքով կտրելու իր մարմնաւոր գոյութեան թելը։

ԿԱՐԱՊԵՏ ԿՈՒՍԻԿԵԱՆ

Անդունդ գոլորւած 1916 թ. կտրեց և մի ուրիշ գրական-դպրոցական գործիչի կեանքի թելը։ Շահազիզի ընտիր աշակերտներից էր այդ դէմքը, որ աւելի քան քսան տարի Մոսկւայի Լազարեան ճեմարանում ուսուցչութիւն էր անում, միաժամանակ պարապելով գրականութեամբ։ Ծնւած լինելով Արմաւիրում և մայրենի լեզուն չիմանալով, Կ. Կուսիկեան մտնում է Մոսկւայի Լազարեան ճեմարանը, աւարտում և նւիրւում հայ դպրոցին ու գրականութեան։ Համբերատար իր բնաւորութեամբ Կ. Կուսիկեանի գաղափարական հակառակորդներն իսկ տածում էին դէպի նա յարգանք։ Եւրոպական կրթութիւնը լրացրեց ճեմարանի ուսումը և մարզեց Կ. Կուսիկեանին իբրև իսկական եւրոպացի՝ մայրենի լեզուն ու գիրը, ազգային աւանդութիւնները ու յատկութիւնները ընդունել հիմք հայրենիքի և նրա զաւակների անսասան մնալուն, բարգաւաճման հիմնական փակտորներ, սրբագործած առաջադէմ լուսաւոր գաղափարներով, ճշմարիտ գիտութիւնով։ Հանգուցեալը սիրելին էր իր աշակերտների, որոնցից շատերն այժմ մեր գրական, լրագրական աշխարհում ուշագրաւ տեղ են սկսում բռնել։



† Կարապետ Կուսիկեան

† Յովսեփ Աթաբէկեան

ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԻՒՆ

Նկար՝ԴՈՒՄՏԱՒ ԴՕՐԷի



Հայ Թատրոնի հիմնադիր և նահապետ հայ դերասան Գէորգ Զմշկեան կենդանութեան ժամանակ մեզ էր ընծայաբերել իր Թանգագին յիշատակարանը, Պ. Ադամեանի Նամականները։ Սրանց մի մասը տպուած է Տարազի նախորդ տարիների № №-ում. 1913 թ. № 11-ից յետոյ ընդհատեցինք ժամանակաւորապէս այս յիշողութիւնների տպագրութիւնը, որովհետև վաղաժամ էինք համարում անվիտխոխ հրատարակելը։ Ներկայ №-ից սկսում ենք քաղուածօրէն տպագրութիւնը, անփոփոխը թողնելով ժամանակին։ Տ. Ն.

ԻՄ ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

1879—1881

Կ. ՊՕԼՍՈՒՄ

Վերջապէս հասաքսեցինք Ղալաթիա ասած թաղը, նօտար Սրապիոն Հէքիմեանի գրասենեակը, ուր և, ձեռակերպելուց յետոյ մեր պայմանները, վերջրինք ամէն մէկս պայմանագրութեան մի մի օրինակ և իսկոյն գնացինք լուսանկար Աբդուլլահ եղբայրների մօտ, մեր պատկերները հանել տալինք և դերասանուհիների ու Ադամեանի լուսանկարները իսկոյն ուղարկեցի մասնաժողովի նախագահ իշխան Ամատունուն։ Այն տեղից մենք դառանք մեր հիւրանոցը, ուր Քուչարեանցը պատրաստեց ֆրանսիական մի լաւ նախաճաշ իր հաշուով։

Երիտասարդական օրերիցս իսկ յափշտակուած լինելով Հէքիմեանի գրաւածքներով, ես շատ փափաքում էի նրա տեսութեանը և շատ ուրախացայ, որ ինձ յաջողուեց ոչ թէ միայն տեսնել նրան, այլ և մի տեսակ բարեկամական յարաբերութիւն ունենալ նրա հետ Պօլիս եղած ժամանակս։



Գէորգ Զմշկեան
Հիմնադիր դերասան հայ բեմի
† 22 դեկտ. 1915 թ. Պետրոգրադ

Մի բան միայն ինձ շատ խորթ թւաց. այն մարդը, որ գրւածքներում այնքան հայրենասէր էր և կրակոտ աղգասէր էր հանդիսանում, իր տան մէջ, ընտանիքում, անգամ իր գրասենեակում օտար լեզուներ էր գործածում, ընտանիքում յունարէն, իսկ գրասենեակում և ծանօթների մօտ տաճկերէն։

Այլ է գաղափարի տէր լինել, այլ է գաղափարը գործադրել իմանալ։

Հէքիմեանի հետ ծանօթանալուց յետոյ, մենք ծանօթացանք և մի ուրիշ լուսաւոր անձնաւորութեան հետ, նախկին Մանզումէի Էֆքեար տաճկաբարբառ լրագրի խմբագիր Փանոսեանի հետ, որն ունէր թէև տարօրինակ կարծիք հայութեան յառաջադիմութեան մասին, սակայն պարզ և աղնիւ ընաւորութեան տէր մարդ էր։ Նա ևս մէկ անգամ ակնարկեց ինձ Ադամեանի խարդախութեան մասին, բայց ես դարձեալ չըհաւատացի։

Այս պարոնի առաջարկութեամբ, մենք այցելեցինք սուրբ Փրկչի աղքատանոցը, որ մի երևելի հիմնարկութիւն է, բայց ափսոս որ կարգապահութիւնը բոլորովին ասիական էր։

Այդտեղ ևս մեզ զարմացրեց պօլսեցոց ունեցած թերի տեղեկութիւնները ռուսահայոց նշանաւոր գիներական գործիչների մասին։

Աղքատանոցի ընդունարանում մենք տեսանք պատի վրայ կախարած վրաց իշխան գիներալ Մելիքովի պատկերը, որի տակ խոշոր տառերով գրւած էր՝ հայազգի ռուսաց զօրապետ Լօռու-Մելիքեան։

Քուչարեանը և ես ուշադրութիւն դարձնելով այդ հանգամանքի վրայ, չկարողացանք համոզել Աղքատանոցի խնամակալ կառավարիչներին, որ այդ պատկերը վրաց իշխան Մելիքովի և ոչ թէ Լօռիս-Մելիքեանի պատկերն է։ Մէկ ժամի չափ ճանալուց յետոյ այդ տեղ և նւիրելով մեր լուման՝ Քուչարեանցը մէկ ոսկի, իսկ ես կէս ոսկի յօգուտ աղքատանոցի գանձարանին, հեռացանք շատ տխուր տպաւորութեան տակ։

Պայմանները գրելու ժամանակ, Հէքիմեանը խընդրեց միւս օրը գնալ ճաշելու Մէրիէմ—կուլիի մօտ,

Գէորգ Զմշկեան
Արիական հասակում

համուտ փաստարան և յայտնի ազգասէր, ազգային ժողովի երեցփոխաններից մէկը, որ կամենում էր ծանօթանալ մեզ հետ։

Վճռեցինք որ միւս օրը Քուչարեանցը, Սրապիոնը և ես կիջնենք Նաւահանգիստը, ուր սպասելիս կը լինի մեզ Հէքիմեանը և այնտեղից նստելով շոգենաւը կերթանք «L'iles des princes» անուանած կղզին, ուր բնակումէ ամառ ժամանակ պ. Մէրիէմ—կուլին։

Օրը գեղեցիկ էր, ծովը հանդարտ. մենք ճանապարհ ընկանք կարծեմ ժամը 10-ին առաւօտեան և ժամը մէկին հասանք այդ կղզին։

Բայց ինչ հիանալի կղզի է, ինչ գեղեցիկ դիրք ինչ հրաշալի բուսականութիւն... Տները, կարծէք, փաթթաթած են կիտրոնի, ուրիշ անուշահոտ ծառերի, խաղողի տերևների ու հազար ու մէկ զմայլեցուցիչ բուսականութեան մէջ։

Պ. Մէրիէմ—կուլին մեզ ընդունեց մի փառաւոր, թէև համեստ զարդարած, դահլիճում և ներկայացրեց մեզ մի քանի տիկիններին և օրիորդների. դրանք ամենքն էլ նրա ազգականներն էին։

Ինքը Մէրիէմ—կուլին· միջահասակ, վայելուչ կազմուածքի տէր երիտասարդ մարդ էր, սուր, սև աչքերով։

Դահլիճում դրած էր մի դաշնամուր և սեղանի վրայ զանազան խմիչքներ, արաէնտ, կոնեակ և այլն։

Մեր մտնելուց յետոյ հինգ րոպէ չանցած, ներս մտաւ մի պարոն կարճահասակ, մօտաւորապէս քառասուն տարեկան և մի երեխայ մօտաւորապէս 14 տարեկան։

Ամենքը հրճուանք յայտնեցին դրանց գալու պատճառով։

— Սա պարոն Զուխաճեանն է իր զաւակի հետ, ներկայացրեց Մէրիէմ—կուլին։

Մենք սեղմեցինք իրարու ձեռք։

Մէթէ սա այն յայտնի հայ կոմպոզիտորն է, «Արշակ» օպէրայի հեղինակ Զուխաճեանը, հարց զարթեց գլխումս, պատասխանը ստացայ իսկոյն պարոնի և նրա զաւակի արարքից։ Հայրը նստեց դաշնամուրի մօտ, զաւակը կանգնեց մօտը. մէկը սկսեց հնչեցնել, միւսը երգել սաստիկ խուպոտ ձայնով մի քանի ազգային եղանակներ, նոյն Զուխաճեանի հեղինակութիւններից։

Քուչարեանցը հարցրեց երեխայի ձայնի խուպոտութեան պատճառը։

—Անտանելի սովորութիւն կայ մեր մէջ,—պատասխանեց Զուխաճեանը. ամէն մի տօն օր ես և զաւակս կանուխ առաւօտից ստիպւած ենք պտտիլ ծանօթ—բարեկամներիս տունը, սրանից փոքր ինչ յոգնել է շատ երգելուց։

—Ի՞նչպէս, չըհամբերեցի ես,—մի՞թէ դուք պարտականէք զւարճացնելու ուրիշներին, երբ ինքներդ արւեստագէտ մի անձնաւորութիւն էք։

—Է՛հ պարոն,—պատասխանեց հայ կոմպոզիտորը, շարունակելով հնչեցնել դաշնամուրը, դեռ այստեղից մի տասը տուն դարձեալ պիտի այցելենք. այդպէս է ընդունւած այստեղ։

Յետոյ մի քանի եղանակներ ես շտապով ածեցուց և երգելուց յետոյ, հայր որդի մեզ բարեաւ ասին ամենքին ու հեռացան։

— Այս ինչ տեսակ սովորութիւն է եղել սրանց մէջ, ասացի ես, ուսերբէն Քուչարեանցին։

Նա ուսերը վեր քաշեց միայն։

Այդ բաւական չէր, մեզ սպասումէր մի ուրիշ այլանդակ սովորութեան ես վկայ գտնւելու։

Պ ա պ ո
Գէորգ Զմշկեան



Գէորգ Զմշկեանի ինքնագրագիրը լուսանկարի եռեւ մակագրած եւ Գ. Սունդուկեանին ուղարկած

Մեզ հրաւիրեցին սեղանատուն, ուր սկսեցինք ճաշել թէ չէ, տանտէրը, յետոյ Հէքիմեանը սկսեցին խրթին ճառաբանութիւններ անել, ապա բոլոր սեղանակիցները դիմեցին Ադամեանին, խնդրելով, որ նա մէկ «տեսարան մը գոցէ»։

Ադամեանը, որ իմ կողքիս էր նստած, վերկացաւ տեղից և սկսեց հազալով մաքրել ձայնը։

Այս ինչ բան է, մտածեցի ես, սրանք երևի ինձ էլ «մէկ տեսարանմը» պիտի գոցել տան, իբրև ռուսահայ դերասանների ներկայացուցիչ։

Յետոյ Ադամեանը բերանը բաց արաւ, որ մի ինչ որ սրտաշարժ «տեսարան գոցէ», ես ընդմիջեցի։

—Մեր մէջ, պ. Մէրիէմ-Կուլի,—դարձայ ես տան տիրոջը—սովորութիւն չկայ, որ ճաշի ժամանակ հիւրդերասանին զանազան տեսարաններ կատարել տան։ Ասի և պինդ քաշեցի Ադամեանի ռէտինդոտից։

Այդ ժամանակ նա ինձ յարգումէր և լսում, ուստի, ներողութիւն խնդրելով որ փոքր ինչ տկար է և արամադրւած չէ, հրաժարւեց «տեսարանը գոցելու»

Քուչարեացը հասկացաւ իմ նեղ դրութիւնը և, վերցնելով բաժակը, մի այնպիսի զարհուրելի ազգասիրական ճառ արտասանեց, որ տաճկահայքս յափշտակւեցին և մոռացան Ադամեանի դերասան լինելը։

Նրան պատշաճաւոր կերպով պատասխանեց խրբթին գրաբառով Հէքիմեանը և ճաշը վերջացաւ։

Գէորգ Զմշկեան

ԳԷՈՐԳ ԶՄՇԿԵԱՆ-ՔԱՐՏՈՒՂԱՐ Կ. Հ. Բ. Ը.

Վերջին անգամն էր, կարծեմ, երբ ես տեսայ Գէորգ Զմշկեանին Կ. Հ. Բ. Ը. երեսնամեակը լրանալու օրերին, 1911 թ. սեպտեմբերին։

Երբ բազմամարդ ընդհանուր ժողովում 1880 թւականին քննւում էր Կ. Հ. Բ. Ը. կանոնագրութիւնը Գր. Արծրունու թատրոնում, բեմի վրայ՛ի միջի այլոց բազմած էին հայ բեմի վիթխարի սիւները՝ Գաբրիէլ Սունդուկեանց և դորա գրւածքների գլխաւոր տիպերը վերաստեղծող Գէորգ Զմշկեան։ Առաջինը, իբրև Բարեգ. Ընկ. կանոնագրութիւնը սրբագրող և երկրորդը իբրև նոյն օրւայ ընդհանուր ընտրեալ քարտուղար։

Այդ օրւանից անցաւ երեսուն և մէկ տարի։ Տիգրան Նազարեան—այդ եղակի հայ—եանկին, կամեցաւ բեմ դուրս բերել ոչ միայն նահապետ դերասան—արւեստագէտ Զմշկեանին, այլ և նոյն իսկ բեմական հեղինակ Սունդուկեանցին։ Եկաւ ինձ մօտ, եկէք, ասաց, Սալօնը նկարւելու. բայց դժւարութիւնը նրանումն է, որ Սունդուկեանցն ու Զմշկեանը պժտած են իրարու հետ և հնարաւոր է արդիօք բերել նրանց միասին նստեցնել։

Պայմանաւորւեցինք, օր ու ժամ նշանակելով, որ ես կ՛աշխատեմ Սունդուկեանցին բերել, նա, Նազարեանը—Զմշկեանին։ Բանից դուրս եկաւ, որ այդ օրհնեալները հէնց այդպիսի մի մհանի էին սպասում, որ միմեանց տեսնեն ու անցեալը, որ միշտ քաղցր է, յիշեն։

Եւ ահա բեմը, որի վրայ ներկայացրինք Տիգրան Նազարեանի պիէսը. Գեղագիտական Սալօնի դահլիճը, սեղան դրած, Սունդուկեանցը բազմած, ինչպէս երեսուն և մէկ տարի այն օրւանից առաջ քարտուղար և Զմշկեանը արձանագրութիւն կազմելիս։

Տիգրան Նազարեանի հիւրասիրութեան սեղանի շուրջը շարունակւեցին անցեալի քաղցր յիշողութիւնները այդ երկու մեր ցեղի սրտին սիրելի երախտահարց, արւեստագէտների մէջ...

Թշւառ է հայ ազգի անցեալը, բայց աւաղ, օրւան օրս աւելի ևս թշւառազոյն է. դալւեալ երանի անցեալին...

Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԹԵՐԹԵՐ ԻՄ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Անցքեր, դէպքեր, գործիչներ եւ դէմքեր

ԳԷՈՐԳ ԶՄՇԿԵԱՆ

I (Կենսագրական)

Գէորգ Զմշկեանը Սուրբ Սարգիս եկեղեցու առաջ քահանայ Տէր Յարութիւնի որդին էր։ Ծնուեց մօտաւորապէս 1834—5 Թուականներին։ Վախճանուեց Պետրոգրադում 1915 թ. դեկտեմբերի 28-ին։ Նա ունէր երեք եղբայր Աղէքսանդր, Սարգիս (հրաւեալ հաւատարմատար Յարութիւն Զմշկեանի հայրը) և Ստեփան և մի քոյր Եգիսաբեթ անուններով։ Գէորգ Զմշկեանը երկրաչափ էր և պետական ծառայութեան մէջ, որ Թողեց 1862 Թուականին և նուիրուեց հայ Թատրոնին, որին ծառայելը այն ժամանակ խելառութիւն էր համարուում։ Զմշկեանը ամուսնացաւ իր զոյգ եղբայր Տէր-Աբրահամեանի հետ, որ նրան մի քանի զաւակներ պարգեւեց, որոնցից արուն վարդանը, ապրում է Պետրոգրադում, տ. Հայկանոյշ սովրում է երգեցուԹիւն, իսկ օր. Վիրգինիան այժմ Թիֆլիսումն է։ Զմշկեան ունեցաւ և այլ զաւակներ, որոնք վարակիչ հիւանդութեան զոհուեցան։



Ադամեան

Նա 40 տարիներից աւելի ծառայեց հայ բեմին և հեռացաւ միայն այն ժամանակ, երբ ֆիզիքապէս անկարող էր օգտակար լինել իր սիրած Թատրոնին, բայց և իր առանձնութեան մէջ նա լրագրների միջոցով մեծ հետաքրքրութեամբ հետևում էր սիրած գործին։

Զմշկեանի եղբայրներն ու քոյրը վաղուց վախճանած են, իսկ մի քանի տարի սրանից առաջ վախճանուեց և նրա ամուսինը, տ. Եղիսաբեթ—Զմշկեանը, ըստ բեմի տ. Սաթենիկ-Զմշկեան։ Սիրող և հոգատար ամուսնու և զոքանչի մահը մեծ հարուած էր Գէորգի համար և այդ հանգամանքը աւելի էլ արագացրեց նրա մահը...

Գէորգ Զմշկեան հայ Թատրոնի ամենագլխաւոր հիմնադիրներից մէկն է...

II

Բեմը առանց դերասանուհիների

Երբ Զմշկեան սկսեց իր բեմական գործունէութիւնը, դերասանուհիք չկային և սկզբում աշխատում էին այնպիսի պիէսներ ներկայացնել, ուր կանայք չկային, կամ Թէ նրանք երևում էին էբրև ուրուականներ. մի չարսաւ գցում էին մի երիտասարդի վրայ և նա ցուցամատը բարձրացրած խորհրդաւոր քայլերով անցնում էր մի կուլիսից մինչև միւսը և այնտեղ էլ անհետանում էր...

Սունդուկեանը իր «Ամէնաբալայի» մէջ դուրս է բերել Ամփերիի տիպը, բայց այդ դերը սկզբից անւանում էր Օսանա, որին կեանքից կինդանի պատկերացրեց Սունդուկեանը և անունն էլ դրեց Օսանա, բայց իսկական Օսանան եկաւ Գաբրիէլի մօտ, փուեց նրա ոտքերի առաջ և աղերսեց։

—Կամ ինձ սպանիր, կամ Օսանա անունը փոխիր...

Եւ Սունդուկեանը փոխեց Ամփերիի...

Ահա այդ Օսանան էր, որ դուռ հայոց բեմի համար առաջին դերասանուհուն տ. Սօֆիա Մելիք-Նազարեանին, յետագայում Սօֆիա Միխայլովնա Իզմիրօվա...

Դա մի վայելչակազմ, բարձրահասակ, չքնաղ կին էր, գլուխը վրացական չիքալայով կապած։ Նա այնպիսի գեղեցկուհիներից էր, որոնք մինչև խոր ծերութիւն պահումեն իրանց վայելուչ տեսքը...

Ես տեսայ տ. Սօֆիային մեռնելուց առաջ, պառաւած՝ տեսայ նրան և դագաղի մէջ և նա դարձեալ գեղեցիկ էր...



Գէորգ Պետրոսեան

Եւ ահա այդ կնոջը, որ բուն վրացախօսէր, սովորեցրին հայերէն և բեմ դուրս բերին։

Դա դարձաւ կուռածաղիկ Վ. Շահխաթունեանի և Զմշկեանի Թատրոնական կուսակցութիւնների մէջ, որոնցից իւրաքանչիւրը աշխատում էր իր կողմը գերաւել տ. Սօֆիային...

III

Տ. Պայծառ եւ Պ. Քասունէեանի ամուսնութիւնները եւ or. Գայանէ

Այդ ժամանակները կ. Պօլսից մեզ մօտ, Թիֆ-

լիս ներկայացումներ տալու համար Փասուլչեհան ամուսինները որոնց մասնակցողներ էին հարկաւոր և, որովհետև Զմշկեանի խումբը դերասանուհի չունէր, նա միացաւ Փասուլչեհաններուի հետ։ Սօֆիա Մէլիք-Նազարեանի և տ. Պայծառի մէջ մրցութիւն սկսւեց, երբ նրանցից մէկը մասնակցում էր մի խմբին, միւսը մասնակցում էր հակառակ կողմին։

Տ. Պայծառ, ճշմարիտ է յարգում էր Դէորգին, բայց իր ամուսնու ազդեցութեան տակ, շատ ու շատ անգամ վշտացնում էր Զմշկեանին։

Պատահում էր այնպէս, որ տ. Պայծառ ներկայացման օրը ժամի չորսին կամ հինգին հրաժարւում էր ներկայացմանը մասնակցելուց և այդ դէպքերում դիմում էին կամ տ. Սօֆիային կամ Սահակ Ադիբէկ-Մելիքեանին։

Վերջինը աննշան դերեր էր խաղում, օրինակ ծեր Ծառուկը *Շուշանիկի* և Վարդանանց *պատերազմի* մէջ, Ժօզէթը *Կարդինալ Րիշելիի* մէջ, բայց նա մեծ ազդեցութիւն ունէր տ. Պայծառի վրայ...

Սահակը մահուդէմիխանուէթ ունէր Թամամշևի քարւանսարայում, որ մի տարւայ ընթացքում տ. Պայծառը քամու տւեց և Սահակին սնանկացրեց, այնուհետև հանդէս եկաւ օր. Գայանէն։

Ճշմարտասէր, մինչև մահն էլ ինքնասէր և աստիճանի Զմշկեանը վերին աստիճանի վրդովւում էր բեմական խարդաւանքներից...

Նրա համար մեծ հարւածէր և այն, որ օր. Գայանէն վերջը տղայ դուրս եկաւ...

Քանիոր խօսքը տ. Սօֆիայի մասին է, չը մոռանամ յիշել, որ այդ ժողովուրդից դուրս եկած հասարակ և անգրագէտ կինը վերին աստիճան ընդունակ էր։ Այդպէս նրա ոսկեթել թանգագին կարերը միշտ ներկայացնում էին Կովկասի Փոխարքայ մեծ իշխան Միխայել Նիկօլաևիչին, իսկ յետագայում տ Սօֆիա Իզմիրեան սկսեց նկարչութիւն սովորել և նրա նկարներով հիանում էին մասնագէտներն անգամ...

IV

Մամիկոնեան եղբայրներ և դարձեալ Մամիկոնեան եղբայրներ և Տիկին Սաթենիկ-Զմշկեան

Շախաթունեանի խումբ քայքայւեց անհետացաւ, Այդ խմբի մնացորդները միացան կամ Դ. Զմշկեանի, կամ Գրիգոր և Յովհաննէս Մամիկոնեանների խմբի հետ...

Եղբայրները իրաւունք չունէին մասնակցել ներկայացումներին, բայց նրանցից մէկը, Գրիգորը, երկու որդի ունէր, Վահան և Արտաշէս Մամիկոնեաններ, որոնք Մամիկոնեան խմբի կորիզներն էին։ Եղբայրներից Վահանը դրամատիկ դերեր էր կատարում, իսկ Արտաշէսը կոմիկական։ Վերջինս յայտնի է իբրև վաղեմի Թիֆլիսի նօտար, իսկ աժմ երկուսն էլ կապալառուներ են...

Մամիկոնեաններուի ներկայացումները տրւում էին դերմանական կըլուբում, Բարօնսկայա փողոցի վրայ, վաճառական Դասպարեանի տներում և Շերմազանեանի դարբասում։ Դրանք միայն մէկ թէ երկու ներկայացում տւին Թամամշևի արքունական թատրոնում։ Ներկայացրին «Նեարդ և Աստղիկ»։

Ահա այդ խմբի մէջ առաջին անգամ բեմ դուրս եկաւ տ. Սաթենիկ Զմշկեանը, առաջ Տէր Աբրահամեան ազգանունով, իսկ յետոյ տ. Սաթենիկ բեմական անունով։

Տ. Սաթենիկ առաջ գրաշար Ներսէս Տէր-Աբրահամեանի կինն էր, որ «Մշակ»ի գրագրի maitre en page էր։

Գրիգոր Արծրունին կնքում էր իր գրաշարի եղբայրներին։ Ներսէս Տէր-Աբրահամեանը բարակացաւ ունէր և նրա եղբայրներից և ոչ մէկը չը մնաց կենդանի։ Գրիգոր Արծրունին պատահմամբ ներկայ էր և զիլ Ներսէսի մահուան ժամանակ, որ Նրա վրայ մեծ տպաւորութիւն էր թողել, որովհետև վերջին րոպէներին Ներսէսը սկսել էր ձևացնել տառերի շարւածքը...

V

Զմշկեանի խմբի կորիզը

Գ. Զմշկեան, Միհրդատ Ամերիկեան, Արտաշէս

Տ. Սաթենիկ Զմշկեան Միմէոն Հախումեան

Սուքեասեան, յետագայում Դէորգ Միրազեան, տ. տ. Սաթենիկ և Բէթօ Մելիք Արամեան ահա սրանք էին կազմում Զմշկեանի խմբի կորիզը։

Սեդրաք Մանդինեանը արդէն հեռացած էր խմբից...

Փորձերը կատարւում էին Բէթօի տանը։ Մեղմ Բէթօն շատ էր վշտանում, երբ Ամերիկեանը Զմշկեանի «չօլախ» բառին պատասխանում էր «քաչալ» բառով։ Բէթօն ինքը խաղաղ էր և միշտ կրում էր շինովի կաւիք և մազեր...

Ընկերների մէջ յաճախ պատահում էին վէճեր, բայց ամէնը հաշտութեամբ էր վերջանում։

Զմշկեանը մաքուր ընկերական սիրով սիրում էր ընկերուհի Սաթենիկին ու վերջը այդ սէրը 1874 թւականին ամուսնութեամբ պսակւեցաւ. այնուհետև ամուսինները առաջւայ եռանդով և աշխուժութեամբ տանում էին իրանց լուծը, հայ թատրոնի լուծը...

Ես սարսափում եմ, երբ մտածում եմ, որ հայոց թատրոնի հիմնադիր բազմաշխատ ու բազմաչարչար մշակի աճյունը կարող է մնալ Պետրօգրադ։ Այդ ժամանակաւորապէս թաղումը ինձ շատ է վշտացնում բայց դեռ ևս յուսահատւել վաղաժամ է...

VI

Օրիորդներ Լիզա եւ Աննա Ճօճ-Բրեցներ

Վերնագիր անուններն էին կրում երկու հրէուհի քոյրերը, որոնց Դ. Զմշկեանը բեմ դուրս բերեց 70 ական թւականներին։ Երկուսն էլ այժմ սաղ սալամաթ են և ամուսնացած։ Այդ երկու օրիորդներն էլ

Տիկ. Փառանձեմ
† 17 դեկտ. 1915 Թիֆլիս

† Ամիրան Մանդինեան-Կակուլի

Բրիսափորեան Պետրոս
† 1916 Մոսկւայ

դցեցին իրանց աշխատանքի լուման հայ Թատրոնի գանձարանի մէջ։ Երկուսն էլ հայերէն խօսում էին, իսկ միացածը սովորեցնում էր ինքը Գէորգը, որ միևնոյն ժամանակ խմբի ըէժիսօր էր։ Օր. Աննան կատարում էր փոքր դերեր, իսկ օր. Լիզա Ֆօն-Լ'րհններ այնքան աջողութիւն ունեցաւ, որ լաւ կատարում էր Պօրցիայի դերը Շէկսպիրի Շէյլօկ պիէսում. վերնագիր դերը կատարում էր ինքը Զմշկեանը։

Այսպէս ուրեմն Զմշկեան և դերասան էր ու րէժիսիօր, ադմինիստրատօր և դերասանների և դերասանուհիների գտնող և նրանց ուսուցիչ։ Գուցէ այս յուշերիս մէջ ես շատ փիչ եմ գրում իրեն՝ Զմշկեանի մասին և այդ բնական է, որովհետև Գէորգին շրջապատողները նրան սերտ կապած էին, որովհետև նա իրան շրջապատել էր իր այդ աշխատակիցներով և նրանցից իւրաքանչիւրին տւել էր իր տեղը և այդ տեղը հասնելիս անկարելի է նրա հետ չը շփւել...

Հանգուցեալ բժշկապետ Մ. Տէր-Գրիգորեանը գրեթէ ոչինչ չը գրից Ֆ. Զմշկեանի համար։ Նրա գըրւածները կազմում էին Ա. Սուքիասեան, Ամերիկեան, Գ. Միրազեան, Սօֆիա Մելիք-Նազարեան, Ռէթօն և Սաթենիկը։ Մ. Տէր Գրիգորեանի պիէսներում Զմշկեանը շատ աննշան տեղ ունի, որովհետև նրանք բոլորն էլ կատակերգութիւններ էին...

VII

Գաբրիէլ Սունդուկեան եւ Գէորգ Զմշկեան

Գաբրիէլ Սունդուկեան Գէորգ Զմշկեանի ամենամօտ բարեկամն էր և միևնոյն ժամանակ նրա անխնայ դահիճը... Գ. Զմշկեան Սունդուկեանի ամենամօտ բարեկամն էր և միևնոյն ժամանակ նրա անգութ դահիճը... դրամատուրգը և իր արտիստը տարւայ կէսը լինում էին խռով, իսկ միւս կէսը հաշտ։ Լինում էր շրջաններ երբ հեղինակին և իր դերասանին հարկաւոր էր միմեանց հետ տեսնուել, կարևոր էր մտքի փոխանակութիւն և ահա այդ րօպէներին երկուսն էլ աշխատում էին հանդիպել միմեանց, գնում էին այն մարդկանց մօտ, որոնց այցելում էր մէկը կամ միւսը, կամ մինչև անդամ շրջում էին այն ճանապարհով, որով անցնում էր մէկը կամ միւսը...

—Բարև Գէորգ, ասում էր այդ դէպքում Սունդուկեանը սառ.

—Բարև, Գաբրիէլ ջան, ասում էր Գէորգը աւելի ջերմ...

—Սօֆին (Սունդուկեանի ամուսինը) շատ ուրախ կը լինի եթէ դու այսօր ճաշին գաս մեզ մօտ, ասում էր Սունդուկեանը... Նա դեռ երէկ մտաբերում էր, որ դու վաղուց է մեզ մօտ չես եկել...

—Դէհ գիտես էլի, իծանները, ճրէլները, հաւաքւել էին կրծանիսի սարերում...

—Դէհ քշիր իծանիդ էլ, հօթօպնիդ էլ, հա իմոնցը քամու տւի, մանաւանդ, որ Սօֆին էլ խընդրում է...

—Ես ուրախութեամբ կընդունեմ Թանդագին տիկնոջ հրաւէրը...

—Ժամը երեքին, ճիշտ երեքին նոր պիէսն էլ վերջացած է... վանօն կը կարդայ...

—Ուրեմն պէտք է վանօին էլ կանչել...

—Ո՛չ, նա միշտ մեզ մօտ է։

Եւ ճիշտ ժամը երեքին Սունդուկեանը ժամացոյցը ձեռքին անհամբերութեամբ սպասում էր Գէորգին...

—Ախր չի լինի, որ չուշանայ Է, անհամբեր կրկնում էր Սունդուկեանը...

Եւ երեքից ճիշտ հինգ րօպէ անց գալիս էր Գէորգը։ Այդ հինգ րոպէն նրա արտօնութիւնն էր Նա միշտ հինգ րոպէ պէտք է ուշանար...

Եւ մշտական բարի ժպիտը երեսին ընդունում էր տ. Սօֆիան։ Անգամ չէր ակնարկւում թէ Գէորգը վաղուց չէ եկել, թէ նրա և Գաբրիէլի մէջ սև կատու է անցել... Այնպիսի ընդունելութիւն էր լինում, որ սառոյցն էլ կը հալւէր... Եւ այդ օրը անպատճառ տալիս էին Գէորգին սիրած կերակուրներից մէկը...

Գաբրիէլ շտապում էր պիէսը կարդալ, նա ճաշն էլ էր մոռանում և սովածութիւնն էլ...

—Հէ՛ր, առաջ կարդանք թէ ճաշենք, ասում էր նա ուղղորելով դէպի գրասենեակը...

—Ինչ ժամանակ է կարդալու, ընդհատում էր տ. Սօֆին ճաշեցէք յետոյ...

Եւ ճաշում էինք... Ամենքը ուտում էին... ճաշում էր և Սունդուկեանը, բայց նրա ուշք ու միտքը իր պիէսի հետ էր և նա կամ դանակը կամ պատառաքաղը կամ գինին բաժակի փոխարէն սփռոցի վրայ էր թափում... Ամենքը շտապում էին շուտով վերջացնել ճաշը և այնուհետև փակւում էինք գրասենեակում, ես կարդում էի, նրանք վիճում էին...մինչև կէս գիշեր, մինչև ժամի մէկը, երկուսը, մտքերի փոխանակութիւն... անվերջ նկատողութիւններ...

Բախտաւոր րօպէներ...

Միքանի ժամանակից յետոյ նրանք դարձեալ կըուում էին...

Ես այլևս երբէք նրա հետ չեմ հաշտւի, ասում էր մէկը...

—Ես նրան այլևս երբէք չեմ բարևի ասում էր միւսը...

—Կը հաշտւես, ասում էր տ. Սօֆիան...

—Կը բարևես, ասում էր տ. Սաթենիկը...

VIII

Վերջին լուսանկարը

Եթէ ուշք կը դարձնէք Տիգրան Նազարեանի սալօնում, լրագիրների սեղանի մօտ կախւած է մի լուսանկար՝ Գաբրիէլ Սունդուկեան, բժշկապետ Բ. Նաւասարդեան, Ս. Արծրունի և Գէորգ Զմշկեան։ Նոյն լուսանկարը զարդարում է և իմ վաղեմի բարեկամուհի Նինա Սունդուկեանի գրասենեակը, ուր հաւաքւած են Սունդուկեան ամուսինների բոլոր լուսանկարները, նրա գրադարանը, աշխատելու սեղանը իր բոլոր պարագաներով և ամենը, ինչ որ հանգուցեալ հեղինակի հետ որ և է կերպով շփւել է... Ահա այդ սենեակում անկողնի մէջ արդէն 5½ ամիսներ տնքումէ ծանր հիւանդութիւնից շնորհալի օր. Նինա Սունդուկեան։ Այդ տեղ ամէն մի իրը, ամէն մի պատկերը առիթ են տալիս Սունդուկեան ամուսինների մասին անվերջ յիշողութիւնների, որոնք մեծ բաւարարութիւն են պաճառում իմ անպին հիւանդին, որ իր հօր կենդանի պատկերն է և իր հօր պէս համբերութեամբ լսում է իմ անվերջ վշտերն ու գանգատները... Այդ միակ մարդն է, որին ես ներկայանում եմ իմ իսկական պատկերով և որից ես բաժանւում եմ թեթևացած մի ծանր բեռից, մխիթարւած և նոր ոյժեր ստացած...

Լուսանկարի մէջ, խեղճ Գէորգի բերանը իր հայր Տէր Յարութիւնի պէս բաց է մնացել։ Այդ լուսանկարը ունի իր պատմական նշանակութիւնը հայ թատրոնի և Կ. Հ. Բ. ընկերութեան համար...

Սունդուկեան ու Զմշկեան դարձեալ խռով էին, երբ Տ. Նազարեան գտաւ վերջինին և կառքով տարաւ այդ լուսանկարը հանելու համար, Կ. Հ. բարեգործական ընկերութեան 30 ամեայ տարեդարձի առիթով։

Սենեակներիմ Արծրունի կանգնած կարդում է դեկուցագիրը, մնացածները նստած լսում են։

Այդ չորս անձնաւորութիւնները նշանաւոր դեր են խաղացել հայ մտաւորականութեան պատմութեան մէջ։

Սունդուկեան և Գ. Զմշկեան խռով էին, երբ վերջինիս մօտ եկաւ Տ. Նազարեան, բերեց իր հետ Գէորգին և վերջին անգամ հաշտեցրեց նրան Գաբրիէլի հետ։

Այնուհետև Գաբրիէլ և Գէորգ ընդ միշտ հաշտւեցան թէ միմեանց և թէ հողի հետ...

Թող թեթև լինի հողը երկուսիդ էլ գերեզմաններիդ վրայ, թող բազմավաստակ և բազմաչարչար Գէորգի աճյունը արժանանայ մայրենի հողին...

Ժամանակագրական թաղւած...

Մախլաս...

IX

Հիմնադիրներ

Ո՞վ է Բ. Նաւասանդեանը՝ մի բժշկապետ, որ ունի իր մասնաւոր առաջին հիւանդանոցը, որի գինը, ինչպէս ինքն ասում է, 50 կ. է, որը ոչոքի չէ մերժում բժշկական օգնութիւն հասցնել ձրիաբար. լինի հիւանդը մասնաւոր անձն կամ հասարակական գործիչ.... Այնուհետև այստեղ և այնտեղ կը լսէք կամ կը կարդաք, որ բժշկապետ Նաւասարդեան մասնակցել է այս ինչ ժողովին, այն ինչ նիստին և այդքան... Ահաւասիկ սովորական շաբլօն գործ...

Բայց դուք շատ կը սխալւէք, եթէ այդպէս կը մտածէք...

Եթէ ինձ հետ դուք մի հայեացք կը գցէք անցեալի վրայ, եթէ դուք կը մտաբերէք 1878, 79, 80 ական թւականները դուք կը յիշէք, որ այդ ժամանակ օդի մէջ մտաւորական կայծեր էին երևում... ահա այդ կայծերից մէկն էլ բժշկապետ Բագրատ Նաւասարդեան և այդ կայծից առաջացաւ մի հրդեհ, որ հրդեհից ամբողջ Կովկասը և ամբողջ հայ մտաւորականութիւնը...

Ես մտաբերումիմ վերև յիշւած թւականներից մէկը, երբ Բ. Նաւասարդեան և ի մէջի այլոց և ես եկել էինք արքունական թատրոնը, Վօդօվօզնայա փողոցի վրայ հայոց ներկայացմանը։ Ես գիտէի որ նա մի ինչ որ հասարակական գործի նախագիծ ունի և, որովհետև ես թատրոնից դուրս այլ նախագծեր չէի ճանաչում, ուստի դիմեցի նրան անտրակտի ժամանակ. մեր մէջ հետևեալ դիալօգը տեղի ունեցաւ։

—Պարոն Բագրատ, ինչի դուք չէք ձեռնարկում, չէք կազմում մի ընկերութիւն, որ պահպանէր հայ թատրոնը, ապահովէր հայ դերասաններին, մինչև անդամ հայոց թատրոն կառուցանէր...

Նա շտապով ինձ ընդհատեց։

—Վանօ ջան, ասաց նա, ես մի գործ եմ ձեռնարկում, որը պետք է իր մէջ պարունակէ բոլոր ազգային գործերը՝ և թատրօն և ուսումնարան և զանազան հիմնարկութիւններ, միայն թէ այդ աջողւէր...

Անտրաքտը վերջացաւ և մենք շտապեցինք մեր տեղերը...

Ես յետագայում միայն իմացայ, որ Բ. Նաւասարդեանի խօսքը Կովկասի Հ. Բ. Ընկերութեան մասին էր, որ նրա ծանր երկունքներով ծնւած մանուկն է, արդէն չափահաս դարձած և հարստացած...

Մի խօսակցութեան ժամանակ Թիֆլիսի հայ յայտնի բժիշկներից մէկն ասաց։

Նաւասարդեանը լաւ կանէր, որ այդ ուտօպիաններով չզբաղւէր, այլ բժշկականութեան մասին մտածէր...

Այդ ուտօպիաները այժմեան Կ. Հ. Բ. Ընկերութիւնն է...

Ես նորերումս լրագրում կարդացի մի յօդւած, որ կրում էր Անգլիայի պահապան Գամփռը վերնագիրը, որով նկարագրւում էր անգլիական նաւատորմը, որ պահպանում է բուն Անգլիայի սահմանները... Ես չըգիտեմ ինչի մտաբերեցի Բ. Նաւասարդեանին, որը (թող նա ինձ ներէ համեմատութեան համար) այդ գամփռի պէս կանգնած է Ընկերութեանը շահեր պահպանելու համար...

Տիգրան Նազարեանի շնորհիւ ստացւած վերոյիշեալ լուսանկարը, ունի իր պատմական նշանակութիւնը, ուր նկարւած է և Ընկերութեան հիմնադիրը...

—Բայց և այնպէս, Բագրատ ջան, Կ. Հ. Բ. Ընկերութիւնը ոչինչ չարաւ հայ թատրոնի համար...

Մշակ լրագրի հիմնադիրներից մէկնել Գ. Զմշկեանն էր... Այժմ նրանք բոլորն էլ մեռած են, միայն եմ միայն ես, ծեր բուս, և բուում եմ, իմ հերթին սպասելով...

Ա. Արծրունի Մանկության ... Ձմեռնային փառքի քեմի վրա տանում էր տատս իմ ձեռքից, ես էի ինձ համարում Լիլեխոն... Ձմեռնային փառքի քեմի վրա տանում էր տատս իմ ձեռքից, ես էի ինձ համարում Լիլեխոն...

Ա. Արծրունի Մանկության ... Ձմեռնային փառքի քեմի վրա տանում էր տատս իմ ձեռքից, ես էի ինձ համարում Լիլեխոն... Ձմեռնային փառքի քեմի վրա տանում էր տատս իմ ձեռքից, ես էի ինձ համարում Լիլեխոն...

Ֆրանսահայ նշանավոր դերասանուհի Մարի Լիլեխոն, որի մասին հայ մամուլում տարիներ շարունակ տպագրվել են հիացական գրվածքներ։

Խնիկօղներ

Դեմ դեմ ի դեմ ... XI

Ծխամբակ ...

Ծխի փոթորիկ ...



† Թուբեան

† Պարոն-Սարգսեան

† Ամերիկեան

խակոյն կարդինալ-Զմշկեանը չօգնէր։

—Օճօ Ֆրանսուա, երևի դու իմ յանձնարարութիւնը աջողութեամբ ես կատարել, որ շտապելով գեաին ես ընկնում։

—Այո, ձերդ պայծառափայլութիւն, ահա ծրարը...

Ես միայն մի այլ՝ աւելացրի։ Իրանից յետոյ ես շատ եմ մտածել, թէ ինչ կանէր կարդինալ-Զմշկեանը, եթէ ես փախչէի բևից և ամեն անդամ եզրակացնում էի, որ նա մի բան կաւելացնէր...

Եթէ չեմ սխալւում Շուշումն է պատահել հետևեալը...

Ծաղկից են եղել Մեծն Վարդան... Զմշկեան-Վարդանը արտասանում է իր վերջին մօնօլօգը. «Ո՛վ լուսին լուսին...» և դեռ կէսն անգամ չասած, սցէնարիուսի բացակայութեան պատճառով, վաղաժամ մտնում է Ամերիկեան - Եղիշէն՝ ձերուկ Ծառուկի հետ...

Վարդանը դիմում է Եղիշէին։

—Ո՛վ դու Եղիշէ և ձերուկ Ծառուկ, չէ ժամ ներս գալու...

—Ով դու իմ Ծառուկ, ժամ է դուրս գնալու, պատասխանում է Ամերիկեան-Եղիշէն և Ծառուկի հետ անհետանում է կուլիսների մէջ...

Այնուհետև Զմշկեան-Վարդանը վերջացնում է իր մօնօլօգը, իսկ Եղիշէն այս անգամ էլ ներս չէ գալիս և ուշանում է. Զմշկեանը շարունակում է։

—Ասա ով լուսին, ամէն բան ասա՝

Զոլախը չէ գալիս, մորթեց, չէ գալիս... Ամերիկեան-Եղիշէն նոր մտնում է բեմը և գտնելով վիրաւոր Վարդանին, ասում է.

«Ահա իմ Վարդան, վիրաւոր Վարդան, ընկած է այստեղ իմ քաչալ Վարդան...

Բուռն ծափահարութիւններ... ներկայացումը, հասարակութեան ցանկութեամբ կրկնւում է...

XI

Անահիտը աւետի առաւածուհին

Այնտեղ, ուր միանում են Բօգրատիօնովսկայա, և Մուխրանսկայա փողոցները, գտնւում էր վաճառական Վ-ի տունը։

Վերին յարկն ունէր մի երկար պատշգամբ։ Այդ տեղ յետ ու առաջ էր գնում գեղեցկուհի Անահիտը, և զարդարում էր այդ պատշգամբը...

Աբւհատի աստւածուհին իր անունը կրող երկրային հրաշալի էակին ստեղծել էր գեղօրէն և տւել էր նրան գեղեցկութիւն, վայելուչ կազմ, հայկական սև չքնաղ աչեր ու վրձինի ծայրով նկարած սև, բարակ յունքեր...

Անահիտը օժտւած էր դիցուհուց շքեղ տւեալներով. . անցորդները կանգնում էին և ապշած լսում, երբ Անահիտի մատիկները վազում էին թառի սիմերի վրայ և անշունչ գործիքից յափշտակում էին անմահ հընչիւններ Ռաստի, Մահուրիի. Հումայի հնչիւնները... իսկ երբ նա նոյն թառի ներդաշնակութեամբ երգում էր՝

Ախ իմ սիրական ինձմէն հեռացիր
Քեզ ինչ դէթ արի, վուր ինձ ուրացար.
Վիրջը թէ եղեր, էլ ուր մօտկացար
Քու սրտի սէրը ինձ ուր խոստացար...

Ամբողջ Թաղը դուրս էր թափւում պատուհաններից, պատշգամբներից և նրան լսում էր և ոգևորւում...

—Անահիտը երգում է, Անահիտը թառ է ածում, ասում էին դրացիները միմեանց և լսում էին հիացած...

Ուշադրութեամբ լսում էր և երիտասարդ երկրաչափը շնորհալի օրիորդի երգն ու թառը և հայեացքը ցցած նայում էր իր կօշիկների ծայրերին, կարծես սպասում էր, որ նրանք մի բան պէտք է ասէին իր սըրտին...

Այնուհետև տանից դուրս էր գալիս 26 տարեկան երիտասարդը և, իր թուրը առանձնապէս թրըխկթրըխկացնելով և շպօրները զընգ-զընգացնելով, սպիտակ ձեռնոցները մատների վրայ ձգելով, անցնում էր պատշգամբի առաջ...

Զքնաղ Անահիտը, կարծես իր անւանակիր դիցուհուց լուր ստացած, արագ դուրս էր նետւում պատշգամբը և ժպիտը շրթունքներին, դիմում էր երիտասարդին.

—Բարև ձեզ, պարոն, այսօր դուք ուշ էք գնում ծառայութեան...

—Բարև չքնաղ օրիորդ, ես... այո... ուշացել եմ... ես հիացած լսում էի ձեր թաղը և երգը և ուշքի եկայ երբ դուք վերջացրիք...

—Կոմպլիմենտներ... ամեն անգամ կոմպլիմենտներ...

—Երբէք, օրիորդ, երբէք ես կոմպլիմենտներ չեմ ասում...

Երիտասարդները շրպրտում էին միմեանց մի քանի նախադասութիւն, իսկ անցորդները նկատում էին։

—Ի՞նչ հիանալի զոյգ...

Այնուհետև երիտասարդ երկրաչափը տանում էր իր ալ ձեռքը դէպի իր գլխարկը, տալիս էր օրիորդին շքապատիւ...

Օրիորդը հեգնանքով և ժպտալով վերադարձնում էր նոյն շքապատիւը... և երիտասարդը շարունակում էր իր ճանապարհը...

Նրա սուրը աւելի ամուր էր թըրթկում... իսկ շպօրներն աւելի բարձր զընգզընգում։

Օրիորդի ծնողները այս տեսարանին շատ անգամ ներկայ էին լինում և և ասում էին միմեանց։

—Եթէ նա կառաջարկէ, մենք չենք մերժի...

Իսկ տիրուհի Եղիսաբէթը, Գէորգի մայրը, անդադար շշընջում էր Տէր Յարութիւնի ականջին։

—Աջդ վկայ, Տէր-Տէր Յան, Անահիտը ամենալաւ հարսնացուն է մեր Գէորգի համար...

—Թող Աստուծոյ կամքը կատարւի, հեզութեամբ կրկնում էր աւագ քահանայ հայր Զմշկեանը...

Բայց ահա հանդէս եկաւ Գէորգ Զմշկեան. արտասուքը... հագաւ սև սերտուկ և այլ ևս նրա թուրը չէր շըրխկում, շպօրները չէին զընգզընգում...

Անհետացաւ շքապատիւը... Այլևս քնքուշ մատները չէին վազվզում թաւի սիմերի վրայ, շնորհալի ձայն չէր երգում...

Վիրջը թէ էտէր, էլ ոըր մօտկացար,
Քու սրտի սէրը ինձ ոըր խոստացար...

Դերասան, դերասան, գնա գնա գաիր ընկերոջդ... Զքնաղ Անահիտը քեզ համար չէ արւեստի աստւածուհին նրան քեզ համար չէ ստեղծել...

XII

Հարթած բլրակներ

Ծօջիվանքի գերեզմանատանը դեկտ. 21-ին մի բլրակ ևս աւելացաւ... Այդ բլրակը թարմ է, նոր է, ծաղիկներով է ծածկւած դատեր երախտագէտ ձեռքերով. դա դերասանուհի Փառանձեմի գերեզմանի վրայի բլրակն է։ Բայց արդեօք երկար ժամանակ այդպէս կը մնայ, թէ մի քանի ամսից, ամենաշատը մի տարուց յետոյ դա ևս այնպէս կը հարթւի, ինչպէս հարթւեցան Քեթևան Մելիք-Արամեանի, Սմբատ Կարինեանի, Մատինեանի, Միհիրդատ Ամերիկեանի, Դուրեանի, Գէորգ Պարոն-Սարգիսեանի և ուրիշ շատ ու շատ դերասանուհիների և դերասանների գերեզմանների բըլրակները... Իսկ նրանք ինչպիսի բաւականութիւն էին պատճառում հասարակութեանը, որքան նրան ծիծաղեցնում և լացեցնում էին, որքան կենդանի ներկայացնում էին իր միջից վերցրած դէմքերը...

Այժմ դեռ ևս կը լինեն մարդիկ, որոնք կը կարողանան մօտաւորապէս ցոյց տալ բեմական մշակների այդ շիրիմները, թէև նրանք արդէն հարթւած են, բայց կանցնեն մի քանի տարիներ և այդպիսիների գերեզմաններն էլ կը հարթւեն, կը կորչեն ու երբ հայ մեծացած մանուկը հայի սիրտը, հայի ոգին ապագայում կուզենայ տեսնել իր բեմական գործչի դամբարանը, որի մասին նա այս տող կամ այն տեղ կարդացել է, նա շատ հարց ու փորձ կանի, բայց ոչինչ չի գտնի...

XIII

Դործիչների գերեզմանատունը

Մի քիչ դժւար է հայ գրագէտներից, արւեստագէտներից կազմել մի մասնաժողով, որը դիմէր ում հարկն էր և գերեզմանատանը ձեռք բերէր մի կտոր ազատ հող, շրջապատէր նրան ցանկապատով, որպէսզի այդ տեղ թաղւէին մեր գործիչների մարմինները։

XIV

Հակաճապօլէօնական խումբը

1878 թւականն էր։ Արծուրնու թատրոնը արդէն պատրաստ էր, բայց Իշխան Նապօլէօն Ամատունին երեսը շրջել էր այդ թատրոնից, անբաւական լինելով, որ առաջին գիշերը տուել էր ջուրթակահար Վենեաւսկուն...

Արծրունու թատրոնում ներկայացումներ տալու համար կազմւեցաւ իմ ղեկավարութեամբ հականապօլէոնական մի դերասանական խումբ, որ բաւական աջողութեամբ տանում էր գործը։ Գանիոր իշխան Ամատունու խումբը կերակրում էր հասարակութեանը Ֆրանսիական խոհանոցի պատրաստած ըմանտիական պիէսներով, վերջին խումբը տալիս էր տեղական հեղինակների գրւածքները և օտար լեզուներից փոխադրւած և թարգմանած բեմական գրւածքներ։ Այդ խումբը ի միջի այլոց ներկայացրեց ռուսերէնից իմ փոխադրած «Հեղինէի որսը» (Пагоня за прекрасной Еленой), *որի մէջ դուրս էին բերւած թատրոնական մասնաժողովի անդամները և ներկայացնողների գրիմները այնքան աջող և նման էին, որ մասնաժողովի անդամները շատ ուրիշների հետ գալիս էին իրանց պատկերները բեմի վրայ տեսնելու համար... Հեղինէի որսը միմեանց յետևից մի քանի անգամ ներկայացւեցաւ և ամեն անգամ թատրոնը լիքն էր լինում... Այդ խմբի ներկայացումներին անընդհատ մասնակցում էր իմ վաղեմի ընկերուհի տիկին Զաբել...*

† Արտաշես Սուքիասեան

XV

Գեղէոն Միրաղեան Գէորգ Պետրոսեան եւ սրա եղբայր Քրիստափոր Պետրոսեան

Ահա այս խմբի մէջ ունեցան իրանց առաջին դէպիւտները Գեղէոն Միրաղեան և Գէորգ Պետրոսեանի եղբայրը Քրիստափորը և ինքը Գէորգ Պետրոսեան։ Ես շատ ղէմ էի Գեղէոն Միրաղեանի և Գ. Պետրոսեանի ցանկութեանը՝ նւիրել իրանց ոյժերը հայ բեմին, բայց ես անզօր եղայ յամառ երիտասարդներին հետ պահել իրանց դիտաւորութիւնից, ուստի իմ ամենալաւ դերերից մէկը զիջեցի Միրաղեանին։ Իսկ Պետրոսեանը հէնց սկզբից առաջնակարգ տեղ բռնեց խմբի մէջ... Այժմ ես երբ գրում եմ այս տողերը, ես չեմ կարող պահել արտասուքներս, մտաբերելով Գ. Պետրոսեանին։ Նա անչափ սիրում էր Օրդուբաթը և Ագուլիսը և յետագայում իր ամուսինն էլ ագուլեցի աղջիկ ընտրեց։ Իսկ իմ ամենաթանգագին յուշերը կապւած էին Ագուլիսի հետ, որտեղ երկու տարի ուսուցիչ եմ եղել և որտեղ այժմ կայ իմ կառուցած բեմը։ Ազատ ժամանակ մենք մտաբերում էինք Գէորգի հօրը, Միրզա Ուսեփին, ագուլեցուց անչափ և առատ հիւրասիրութիւնը։ Նա անսահման պիրով պաշտում էր իր հայրենիքը և նրա ոգևորւած պատմութիւնները

յիշեցնում էին ինձ անմոռանալի ու քախտաւոր րոպէները, որոնց ես անցրել էի Ագուլիսում... Եւ որպիսի ֆանտիկոսի սիրով էր սիրում վաղամեռ Գէորգը բեմը և որքան օրեր և անքուն գիշեր էր նա նւիրում բեմի ուսումնասիրութեանը և ինչպիսի հսկայական քայլերով նա յառաջանում էր... և սրա գերիզմանի բլրակը նոյնպէս պիտի հարթէր, նոյնպէս պէտք է հողին հետ հաւասարւէր, եթէ սիրող և հաւատարիմ ամուսինը չաշխատէր նրան մի արձան կանգնեցնել... Ես պարտական եմ Գ. Պետրոսեան-Օրդուպադեանի յիշատակին... Ես նրա մասին ոչինչ չեմ գրել, այսինքն մահից յետոյ չեմ գրել, իսկ կենդանի ժամանակ նրան հազարաւոր տողեր եմ նւիրել Մշակի մէջ... Մի ժամանակ ինչ-ինչ պատճառներով եսմեռայ. իմ մտաւորականը փլւած էր. մի քանի տարի ճնացի այդպէս, մինչև որ Տիգրան Նազարեանը մեկնեց ինձ իր ձեռքը և արթնացրեց ինձ քնից, արթնացրեց մտաւորական մեռելութիւնից և եթէ այժմ ձեր բուն բւում՝ նա լիովին պարտական է Տիգրան Նազարեանին... Եւ եթէ ես կապրեմ դարձեալ մի քիչ ժամանակ, ես դեռ ես առիթ կունենամ բւալու Օրդուբադեան-Պետրոսեանի գերեզմանի վրայ...

XVI

Գիորգի Պարոն-Սարգսեան եւ Տ. Փառանձեմ

Գիորգի Պարոն-Սարգսեանը և սցենարիւս էր և դերասան և կօրեկտօր և աֆիշաներ կազմող և ադմինիստրատօր։ Որտեղ որ բաց ծակ էր լինում, խթանը Գիորգին էր... Ներկայացման գիշերը մէկը հիւանդանում էր, հիւանդի տեղ Գիորգուն էինք բեմ շպրտում և նա պատւով կատարում էր իրան անսպասելի կերպով վիճակւած դերը... Բացի այդ, Գիորգին մի մեծ ընդունակութիւն ունէր. նա ճարպիկութեամբ գտնում էր օրիորդներ և տիկիններ և նրանց դերասանուհիացնում էր...

—Պարոն Տէր-Գրիգորեան, ասում էր նա իրան յատուկ արագախօսութեամբ, խնդրեմ ծանօթանաք տ. Ս. Ր. կամենում է մասնակցել ներկայացումներին...

Եւ յետոյ առանձին աւելացնում էր. «Նայեցէք. բոլոր տւեալները ունի, աչքերը արտայայտիչ, դէմքը գեղեցիկ, կազմւածքը բեմական, հասակը յարմար։ Սա դրամատիկական լաւ դերասանուհի կըլինի... Միայն պետք է ոանդել, ութօ քսել մի խօսքով դրէիսիրովատ...

—Լաւ, լաւ Գիորգի ջան, դէհ ոանդիր, ութօ քսիր դրէիսերովատ արա... Բեմական համբոյրների մասին խոհեմաբար լուիր, կըխրտնի. այդ յետոյ, կամաց կամաց...

—Վահ ես չը գիտեմ, քո ասելն էլ ինչ կանեմ...

Բայց և այնպէս տ. Ս. Ր. բեմի համար պիտանի չեղաւ....

—Ահա օր. Վ. Մ. նոյնպէս բեմական տւեալներ ունի, բերեց նա մի փոքրիկ օրիորդ։

—Բայց դա դեռ երեխայ է...

—Ոչինչ, առաջ կը խաղայ երեխաների դերեր, տղաների դերեր, յետոյ հետզհետէ կը ոանդւի, կը սովորի։

Եւ ճշմարիտ օր. Վ. Մ. սովորեց և հայ ու վրաց բեմի վրայ նշանաւոր, աչքի ընկնող տեղ բռնեց։

Տ. Փառանձեմ, որ նոյն այդ խմբի մէջ սկսեց իր բեմական գործունէութիւնը, նոյնպէս Գ. Պարոն-Սարգսեանի բեմական գիւտն է։

Երբ մտաւ դերասանական խմբի մէջ, նա միվայրկեանում նազիկ դէմքով, թուխ երեսով, սև աչերով և յօնքերով շատ համեստ օրիորդ էր։ Օր. Սահակեան, յետագայում Տ. Սաղաթելեան, շատ համեստ էր և փորձերին գալիս էր միշտ իր մօր ուղեկցութեամբ։ Ես մեծ յոյսեր ունէի և նա անպատճառ կարդարացնէր այդ յոյսերը, եթէ անդադար չըփոէր իր ամպլուան։ 1878 թւականից 37 երկար տարիների ընթացքում տ. Փառանձեմ ծառայեց հայ բեմին։ Վերջին անգամ նա բեմ դուրս եկաւ Բագւում Գ. Տէր-Դաւթեանի հետ, Բաֆֆիի Զահրումար վէպից փոխադրւած պիէսի մէջ, հետևեալը նոյն Տէր-Դաւթեանի հետ Բագւայ հայ խմբում պէտք է կատարէր Շուշանի դերը Սունդուկեանի Պեպօ պիէսի մէջ, բայց ծանր հիւանդութիւնը նրան գերեզման իջեցրեց...

Հանգիստ ոսկերներիդ հայ բեմի մշակ, թող թեթև լինի հողը գերեզմանիդ վրայ...

XVII

Արիստափոր Պետրոսեան

Ներկայ յուշերիս մի բաժնում, ես երկրամեայ կեանք ցանկացայ Արիստափոր Պետրոսեանին, անյարմար գտնելով խառնել նրան մեռածների հետ։

Դեռ ես այս տողերը մամուլին չը յանձնած լուր ստացւեցաւ, որ Մոսկւայում վախճանւեցաւ և Արիստափոր Պետրոսեան, որ խաղում էր ոուսաց բեմի վրայ։

Նա առաջին անգամ բեմ եկաւ դարձեալ իմ խըմբի մէջ Աւծրունու թատրոնում Արտաշէս եւ Սաթենիկ ողբերգութեան մէջ կատարելով Ալանաց թագաւորի դերը, որը նա կատարեց մեծ աջողութեամբ և բուռն ծափահարութիւններ ստացաւ...

XVIII

Ո՞r տեղ են ի՛մ զինւորները, տւէք ինձ ի՛մ զինւորները

Այս ներկայացման ժամանակ հետևեալ դէպքը պատահեց։

Ոուս զինւոր ստատիստներին հագցրել էինք միատեսակ բօմանական զինւորների հագուստներ և նրանք արդէն մի անգամ դուրս էին եկել բեմ հայոց թագաւոր Արտաշէսի հետ, իսկ Պետրոսեան պահանջում էր, որ նրան այլ զինւորներ տային...

—Ո՞րտեղ են իմ զինւորները, տւէք ինձ իմ զինւորները, ասում էր նա իր բաս ձայնով, սրանք հայոց թագաւորի զինւորներ են, տւէք ինձ ալանաց թագաւորի զինւորները...

Նա առանց նոր զինւորների չէր կամենում բեմ հլնել, իսկ հասարակութիւնը անհամբեր ծափահարում էր և պահանջում շարունակել ներկայացումը...

Դրութիւնը կրիտակական էր, բայց Գիորգի Պարոն Սարգսեանը օգնութեան հասաւ։

Նախկին արարւածի մէջ զինւորները հետևել էին Արտաշէսին միայն սրերով զինւած, առանց նիզակների և գլխարկների... Գիորգին հրամայեց տալ նրանց գլխարկներ, սաղաւարտներ և նիզակներ և նրանք կերպարանափոխւեցին։

Պետրոսեանը հանեց սուրը «մահ թշնամիներին» աղաղակելով և այդ զինւորների հետ բեմ դուրս նետւեց...

Գալերէյը դղրդաց ծափահարութիւնից...

Յ. Տէր Գրիգորեանց (Վանց)

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՍԱԼՕՆ

Գրական-Գեղագիտական Սալօնում Նոր-Տարու հանդիպման առիթով տեղի ունեցաւ մի ընտանեկան հաւաքոյթ, որ նախաձեռնել էին Տ. Նազարեան և Հ. Առաքելեան և որի նպատակն էր Նոր-Տարին հանդիպել Ամերիկայի երկու ներկայացուցիչների, ամերիկահայերի և վախտական թուրքահայ մտաւորականների հետ միասին։

Ժամը 11-ին արդէն հաւաքւել էին մօտ 40 անձինք և դահլիճում պատրաստւել էր սեղան։ Հաւաքոյթը ստացաւ բանկէտի բնաւորութիւն։ Ճիշդ ժամը 12-ին բանկէտը բացեց Հ. Առաքելեան, յայտարարելով որ «թէև 1916 տարին հանդիպում ենք վշտալի և աղէտալի պայմանների մէջ, բայց ուրախ ենք ունենալով մեր մէջ պատւական հիւրեր, եկած հեռաւոր Ամերիկայից, և մեր սիրելի թուրքահայ եղբայրներին», և առաջարկեց սեղանի կառավարիչ ընտրել բժշկապետ Բ. Նաւասարդեանին, որ ընդունելից մեծ հաճութեամբ։ Նաւասարդեան մի երկար և գեղեցիկ ճառով ողջունեց Ամերիկայի հասարակութեան ներկայացուցիչներ՝ միստըր Վիլսօնին, միստր Հիլլին, ամերիկահայ բժշկա-սանիտարական խմբի անդամներին և թուրքահայ մտաւորականներին, ինչպէս և կամաւորների խմբապետ Պանդուխտին և բոլոր հիւրերին, որոնք մասնակցում էին հաւաքոյթին, կրելով իրանց սրբտերի մէջ համակրութիւն առ թշւառ հայ ազգը և վիշտ՝ նրա կրած տառապանքների համար։

Միստր Վիլսօն հայերէն մի երկար ճառով պատասխանելով այդ ողջոյնին՝ արտայայտեց խորին վշտի այն զգացումներ, որոնցով ամերիկացիները, իբրև քրիստոնեաներ, համակւած են ի տես Արևելքում ամենահին քրիստոնէական ազգի կրած տառապանքների և տանջանքների, և վերջացրեց իւր խօսքը «և սակայն, հայեր, մենք, որ սկսել ենք բերելու ձեզ բարոյական և ղոյդն նիւթական աջակցութիւն, ասում ենք ձեզ. մի վհատւէք, մի յուսահատւէք, ապագան ձերն է» խօսքերով։

Հետզհետէ խօսեցին դօկտոր, Նիպտոն խան, դօկտոր Յովսէփեան Շիրվանզադէ, Վ. Գրիգորեան, Մ. Մինասեան, Պանդուխտ։

Շիրվանզադէն այն միտք յայտնեց, որ, ճիշտ է, ներկայումս դեռ պատօնական է Ամերիկայի աջակցութիւնը, բայց նա ապագայում պատերազմի աւարտուելուց յետոյ, մեծ դեր ունի կատարելու, երբ թնդանօթները կը լռեն և հանդէս կը գայ դիպլոմատիան՝ գործերու. այդ ժամանակ Ամերիկայի ձայնը ահագին նշանակութիւն է ունենալու հայոց հարցի համար։

. . . . . .

Մինասեան խօսեց Ամերիկայի հզօր կուլտուրայի մասին, որ շատ օգուտներ է բերել հայերին և դեռ բերելու է։

Ի վերջոյ Հ. Առաքելեանը, շնորհակալութիւն յայտնելով սեղանակիցներին, առաջարկեց բաժակ սեղանի կառավարչի համար և, դիմելով ամերիկացի ներկայացուցիչներին. ասաց. «Ձեզ երկու բառով ներկայացնեմ՝ ոմն է բժկապետ Բ. Նաւասարդեանը. սակ. Հայոց Բար. Ընկերութեան հիմնադիրն է»։

Ժամը 2-ին հիւրերը մեկնեցին խիստ հաճոյ տպաւորութեան ներքոյ։

——

Ուրբաթ. յունւ. 1-ին Գրական-Գեղագիտական Սալօնում Նպատոն-խան Ազգապետեանը խօսեց առ հասարակ ամերիկացիների նիստ ու կացի, սովորութիւնների և ձգտումների մասին և բաւական հետաքրքրական տեղեկութիւններ տւեց, այդ հետաւոր ու բաղաքակիրթ երկրի մասին։ Նպատոն-խանի ամուսին տ. Աննա Ազգապետեանը բեմական արւեստով պատկերացրեց Շէքսպիրի «Րօմէօ և Ջուլիէտտա» մի տեսարանը՝ Ջուլիէտտայի թուննաւորումը։ Չը նայած անգլերէն արտասանութեանը տեսարանի պատկերացումը գեղեցիկ և խոր տպաւորութիւն թողեց։ Տիկինը արժանացաւ բուռն ծափահարութեան։

Յունւ. 8-ին jour-fixe-ին բժ. Վահան Արծրունի՝ «Ոճրագործ ամբոխի հոգեբանութիւն»։ Ներկայ էին բազմաթիւ Սալօնականներ։

Բժշկապետի գիտնական դասախօսութիւնը լսեց մեծ հետաքրքրութեամբ և նիւթի լրջութեան պատճառով, շարունակութիւնը յետաձգւեց միւս անգամ։

Յունւ. 15-ին, Գրիգոր Վարդանեանը կարդաց՝ «Ալաշկերտի Դիադինի եւ շրջակայ գիւղերի հայ գաղթականների դրութեան մասին մի զեկուցում, ապա խօսեց եզիտիների մասին։ Վերջը տեղի ունեցաւ զրոյց և վիճաբանութիւն։ Խօսեցին Հ. Առաքելեան. պրօֆ. Մինասեան, Շէրենց. Ա. Եզեկեան և ուրիշներ։

Յունւ. 22-ին Սալօնում հաւաքոյթ չեղաւ, ռուս բանաստեղծ Վալիէրի Բրիւսովի հայ բանաստեղծութեան մասին նոյն օրը Արտիստ. Ընկ. սրահում դասախօսութեան առթիւ իսկ յունւ. 29-ին հայ բեմի ոսկեփոր դերասան Սևումեանի բենեֆիսին ի պատիւ, Սալօնում դարձեալ հաւաքոյթ տեղի չունեցաւ։

Փետր. 5-ին բժ. Վահան Արծրունին շարունակեց իր դասախօսութիւնը, «Ոճրագործ ամբոխի հոգեբանութիւն»։

Փետր. 19-ին ուրբաթ իրիկւան jour-fixe նւիրւած էր Աւարայրի ճակատամարտին։

Խօսեցին Հ. Առաքելեան, Ա. Եզեկեան և ուրիշներ։ Եղան նաև զրոյցներ ժամանակակից հրատապ հարցերի շուրջը։

Մարտի 4-ին, Էրզրումից նոր վերադարձած բժ. Երւանդ Մինասեանը կարդաց մի շատ հետաքրքիր և մանրամասն դասախօսութիւն Էրզրումի հայերի ողբալի դրութեան և կոտորածների մասին։ Դասախօսը մանրամասնօրէն պատմեց հայերի կրած տառապանքների, և քաշած անասելի չարչարանքների մասին, բացատրեց թէ ինչ է եղել թիւրք կառավարութեան դիրքը հանդէպ հայերին պատերազմից առաջ, և Ռուս-Թրքական պատերազմը յայտարարւելուց և վանի գրաւումից յետոյ։ Ամբողջ երկու ժամ տեւող այս դասախօսութիւնը շատ շահեկան և հետաքրքիր եղաւ ներկաների համար որոնք մեկնեցին գոհ տպաւորութեամբ։

Սալօնի յիշեալ երեկոյթներին երաժշտական բաժիններում նւագել և երգել են երաժշտ. պրօֆեսօր պ. Բրօյլի և իր երաժշտ. կուրսերն աւարտած երգիչներ ու երգչուհիներ, Բուխարեստի արքայական կօնսերւատօրիայի նախկին պրօֆեսօր, ազատ գեղագետ. պ. Նագի (Լուքաք), և իր քոյրը դաշնակահարուհի օր. Նագի, Փիֆ. երաժշտ. ուսուհի. դասատուները օր. Օլգա Բօւինսկաեա, Բերտա Բուրշտէյն, օր. Բարալեան, երգիչներ պ. պ. Ղազարեան, Սարդարեան ևն։ Բացի այդ ամերիկական հիւրերի համար երգել է շարականներից կտորներ իր հզօր ձայնով և սքանչելի զգացումով եկեղեցական երգիչ հ. Նիկողայոս քհ. Բաւէեան։

Գէորգ Զմշկեանի մահւան քառասունքի յիշատակը Գրական-Գեղագիտական Սալօնը ուրիշ իր հանդիսաւոր հերթական երեկոյթում՝ նախագահութեամբ Սինեքերիմ Արծրունու և քարտուղարութեամբ Գ. Տէր Ռուբէնեանի՝ կատարեց հայ դերասանների, Դրամատիկ. Ընկ. վարչութեան մեծազոյն մասի բացակայութեամբ։

Ս. Արծրունին հանդէսը բանալով, առաջարկեց յոտնկայս յարգել Գէորգ Զմշկեանի և նորերս հանդուցեալ դերասանուհի Փանձամի և դերասան Բրխտափոր Պետրոսեանի (վախճանւած Մօսկւայում) յիշատակը որից յետոյ Բենիկ վարդապետը «Հոգոց» ասաց, իսկ Տ. Նազարեանի «Հրատապ սփոփանք» տպաւորանի փախստական վարժուհիներ և տանները (Վանի Ամերիկական կոլէճի շրջանաւարտ) խմբովին երգեցին «Հայր Մերը»։ Ապա Բուխարէստի արք. կօնսերւատօրիայի նախկին պրօֆեսօր տպատ դեղագետ Ժ. Նահու՝ ուսմանուհի դաշնակահարուհի տ. Նահուի մասնակցութեամբ նւագեց մի քանի ընտիր կտորներ Սօրօսատէից և իր հեղինակութիւններից։ Որոնցնդոստ ծափահարութիւններն ու bis-երը հարկադրեցին երաժշտագէտին նւագել մի քանի երգեր ևս։

Այնուհետև նախագահ Սէնէքէրիմ Արծրունի մի ընդարձակ ճառով դրւատեց Գէորգ Զմշկեանին, որպէս ազգային բեմին նւիրած անձնւէր գործչի։ Պատմեց հայ թատրօնի կեանքից 70-ական թուականներից մինչև մեր օրեր։ Երկար կանգ առաւ Թատրօնի 80-ական թ. րեպերտուարի վրայ որ ունեցել է 250 պիէս։ Արծրունու ասելով Զմշկեանն է խրախուսել մեր տաղանդաւոր դերասաններ՝ Պետրոսեանին և Աբէլեանին։ Վերջում Արծրունին ցաւ յայտնեց, որ այնքանանփառունակ եղաւ Զմշկեանի թաղումը Պետրոգրատում, ուր յուղարկաւորութեանը և թաղման տասը հայ անգամ չէ եղել։

Թիֆլիսում երաժշտ. կրթութիւն ստացող Ընկ. երաժշտ. ուսուհիարանի դիրեկտոր Պրիվետերա, այդ դպրոցի ամբողջ կազմի կողմից յայտնեց սրտագին ցաւակցութիւն և ապա իբրև 35 տարուց ի վեր նրա բեմական գործունէութեան մօտ ականատես, դրւատեց Գէորգ Զմշկեանին իբրև դերասանի ոչ միայն տիղական մայրենի պիէսներում, այլև կլասիկ։ Գէորգ Զմշկեանին «կարդինալ Րիշելիէն» նոյն իսկ եւրոպական մեծ բեմերի վրայ էլ հազիւ թէ ունենար շատ մրցակիցներ։

Հ. Դրամատ. Ընկ. անդամ Արամ Նազարէթեան Գ. Սունդուկեանին և Գ. Զմշկեանին բնորոշեց, որպէս մի անբաժան մարմին. «Պէպօյի» ստեղծագործութեան և պատկերացման մէջ։ Նա յայտնեց, որ Դրամատ. Ընկ. մտադիր է հրատարակել Զմշկեանի յիշատակարանը, որ գտնւում է Տ. Նազարեանի մօտ։

Տ. Նազարեան «Տարազի» կողմից իր վիշտը յայտնեց տաղանդաւոր աշխատակցի մահւան առթիւ։ Պատմեց նրա վերջին այցելութիւնն իր խմբագրութեան, ուր նա հաշտւել է Գ. Սունդուկեանի հետ։ Նա ասաց, որ յիշատակարանի անփոփոխ տպագրութիւնը վաղաժամ է, սակայն հատւածներ կը տպւին «Տարազում»։

Յետոյ խօսեցին Մ. Զմշկեան, Յ. Տէր Գրիգորեան և ուրիշները։ Հանդէսը վերջացաւ ժամը 12-ին։

„ТИФЛИССКІЙ ЛИСТОКЪ“

Кромѣ телеграммъ „Петроградскаго Агентства“, ежедневно въ газетѣ будутъ помѣщаться: **спеціальныя телегрммы отъ собственныхъ корреспондентовъ** о важнѣйшихъ моментахъ политической и общественной жизни какъ въ Европѣ, такъ и въ Россіи.

На западномъ театрѣ военныхъ дѣйствій у „Тифлисскаго Листка“ **нѣсколько** корреспондентовъ. На турецкомъ театрѣ войны „Тифл. Листокъ“ имѣетъ собственныхъ корреспондентовъ въ Эривани, Карсѣ, Игдырѣ и Сарыкамышѣ. Собствен. корреспон. въ Тегеранѣ, Тавризѣ, Рештѣ. Телефонограммы изъ Баку

ПОДПИСНАЯ ЦѢНА:

Съ доставкой въ Тифлисѣ:		**Съ перес. для иногородныхъ:**	
На годъ . .	6 р. 05 к.	На годъ . . .	8 р 50 к.
„ 6 мѣс. .	3 „ 55 „	„ 6 мѣс. . .	4 „ 55 к.

Адресъ: Тифлисъ, Редакція газ. **“Тифлисскій Листокъ“**

3—3

ПРОДОЛЖАЕТСЯ ПОДПИСКА НА 1916 ГОДЪ

на еженедѣльный общественно-политическій и литературный, посвященный вопросамъ армянской жизни, журналъ

„Армянскій Вѣстникъ“

(Первый годъ)

издаваемый въ Москвѣ Ив. Т. Амировымъ

при участіи видныхъ русскихъ и армянскихъ литераторовъ и общественныхъ дѣятелей.

Въ Россіи на 1 годъ 5 руб., на 6 мѣс. 3 руб., на 3 мѣс. 2 руб. 50 коп., на 1 мѣс. 75 коп. За границу вдвое. Цѣна отдѣльнаго нумера 15 коп.

ЖУРНАЛЪ БУДЕТЪ ВЫХОДИТЬ ПО ВОСКРЕСЕНЬЯМЪ.

Адресъ редакціи и конторы журнала „АРМЯНСКІЙ ВѢСТНИКЪ“: Москва. Остоженка. 2-ой Ильинскій пер., д. 3, кв. 2. Телеф. № 3-85-69.

Редакторъ издатель инж. техн. Иванъ Томасовичъ Амировъ. *2—3*

„Кавказское Слово“

Адрес редакціи и конторы: Тифлис, Барятинская, 6.

Подписная цѣна на газету: для гор. подписчиковъ для иногородныхъ

на 1 годъ	8 р.— к.	. . .	9 р. 50 к.
на 6 мѣс.	5 „ — „	. . .	5 „ 50 „

Допускается разсрочка подписной платы лишь для годовыхъ подписчиковъ, при условіи непосредственнаго обращенія въ контору газеты.

Пользующіеся разсрочкой уплачиваютъ: городскіе подписчики—при подпискѣ—3 р., къ 1 марта—3 р. и къ 1 маюа—2 р.; иногородніе—при подпискѣ—4 р. 50 коп., къ 1 марта—3 р. и 1 мая—2 р.

Сельскимъ учителямъ, сельскимъ священникамъ, рабочимъ, мастеровымъ и фельдшерамъ предоставляется скидка въ 10% съ подписной платы.

Книжнымъ магазинамъ и кіоскамъ, принимающимъ подписку—5% скидки.

Редакторъ: **Ю. Ф. Семеновъ.**

Издатель: **Тифлисское Т-во Печатнаго дѣло.**

3—3

„ՀԱՄԲԱՒԱԲԵՐ“

Հասարակական-գրական շաբաթաթերթ

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Հետեւեալ ծրագրով. *1. Պաշտօնական տեղեկութիւններ, Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան կենտրոնական Մարմնի ու ճիւղերի հաշիւները. ընդհանրական. 2. Հեռագիրներ, ներքին և արտաքին տեսութիւններ, հասարակական, կուլտուրական և գիտական բովանդակութեան յօդուածներ, գրական նորութիւններ, պատմական տեսութիւններ, վիպակներ, պատմուածքներ, ոտանաւորներ, քննադատութիւն. 3. Քրոնիկոն, տեղեկութիւններ, թղթակցութիւններ, կենսագրութիւն, մատենախօսութիւն. 4. Արուեստ, թատրոն, երաժշտութիւն. 5. Փոստարկղ, յայտարարութիւն։*

Թերթը բազկացած կլինի 16 մեծագիր երեսներից և լոյս կը տեսնէ կէրակէ օրերը։ Կաշխատակցեն հայ գրականութեան և մամուլի մէջ յայտնի անձեր։

Բաժանորդագինն է տարեկան 4 ր., կէս տարուան 2 ր. 50 կ. Բարեգ. Ընկ. անդամների, հայ դպրոցների, ուսուցիչների, հայ հասարակական հիմնարկութիւնների համար՝ տարեկան 3 ր., կէս տարուան 2 ր.։ Արտասահման 5 ր., 6 ամսուան 3 ր.։

Բաժանորդագրութիւն ընդունւում է խմբագրատանը, Թիֆլիս, Աբաս-Աբադեան հրապարակ, № 7 և Ընկերութեան գաւառական ճիւղերի վարչութիւններում։

Օտար քաղաքներից դիմում են՝ Тифлис, Редакція „АМБАВАБЕР“. *Արտասահմանից՝* Tiflis, Rédaction du journal «HAMBAVABER».

Խմբագիր՝ **Սամսոն Յարութիւնեան**

Հրատարակիչ՝ **Կովկասի Հայոց Բարեգործ. Ընկերութիւն**

3—3

1843 „ԲԱԶՄԱՎԷՊ“ 1916

Հասցէն՝ Rédaction de la revue „PAZMAVEB„

S. Lazare Venise (Italie)

ՄՇԱԿ

45-րդ տարի

Քաղաքական եւ Գրական Օրաթերթ

Բաժ. 10 ր. հասցէն, Редакція «Мшак» Тифлис. *արտասահմանից* Tiflis rédaction Mschak

ՀՈՐԻԶՈՆ

VIII տարի

Հասարակական, գրական եւ քաղաքական օրաթերթ

Բաժ. 10 րուբ. արտասահման 12 րուբլի

Հասցէն՝ Редакція „Оризон“ Тифлис. *Արտասահմանից* redaction «Hopizon» Tiflis (Caucase—russie)

ԳԻՊԱՏՆՏԵՍ

Շաբաթաթերթ

Թիֆլիս, բաժ. տարեկ. 3 ր. արտասահ. 4 ր

Тифлис, Редакція «Гюгатнтес»

ԿՈՉՆԱԿ

XVI-տարի

Շաբաթաթերթ

The «Gotchnag» 115 E. 24 th. St. New-Work

Дозволено Воен. Цензурою

Тип. Н. Аганьянъ, Тифлис Полиц. № 7.